

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման  
ամբիոն**

**ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ**

**ՄԱՏԱԿՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ ԱՐԱՅԻ**

**ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵՂ**

**ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ,  
ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ**

*Գիտական ղեկավար՝ պ.գ.թ. դոցենտ Զրբաշյան Նաիրուհի*

**ԵՐԵՎԱՆ 2018**

**THEME: The impact of the institutional environment on the main macroeconomic indicators, case of Armenia**

\*\*\*

Աշխատանքում ուսումնասիրվել է ինստիտուցիոնալ միջավայրի ազդեցությունը երկրի բարեկեցության մակարդակը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Աշխատանքի **նպատակն** է ներկայացնել ինստիտուցիոնալ միջավայրի ազդեցությունը տնտեսական գործունեության կազմակերպման վրա, կապը երկրի մակրոտնտեսական կատարողականի հետ, վիճակագրական տվյալների և էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ պարզել ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրի դիրքը զարգացած, զարգացող և անցումային տնտեսությունների շարքում, ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման միտումները, ներուժն ու զարգացման այլընտրանքային ուղիները: Աշխատանքում կառուցվել է ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող համալիր ցուցիչ և ստուգվել է ինստիտուցիոնալ միջավայրի և 1 շնչի հաշվով ՀՆԱ - ի միջև առկա ուղղակի դրական կապի առկայության վարկածը: Այնուհետև կառուցվել է ձգողականության մոդել, որի միջոցով պարզվել են ինստիտուցիոնալ հեռավորությունը պայմանավորող գործոնները, մասնավորապես՝ բացարձակ մեծությամբ ինստիտուցիոնալ հեռավորությունը մեծացրող ամենաազդեցիկ գործոնը 1 շնչի հաշվով ՀՆԱ - ի տարբերություններն են, իսկ ինստիտուցիոնալ հեռավորությունը փոքրացրող ամենաազդեցիկ գործոնը տարբեր տնտեսական միություններին անդամակից երկիր հանդիսանալն է: Աշխարհագրական գործոնի դերը կարճաժամկետ հատվածում ունի թույլ ազդեցություն, սակայն երկարաժամկետ հատվածում այդ ազդեցությունը չի դրսևորվում:

Բովանդակություն

Ներածություն.....	5
Գլուխ 1. Նեոհնստիտուցիոնալ տնտեսագիտությունը որպես տնտեսագիտության զարգացման ուղղություն.....	9
1.1.Նեոհնստիտուցիոնալ տնտեսագիտության հիմնադրույթները.....	9
1.1.1.Գործառնական ծախսերը.....	14
1.1.2.Սեփականության բացարձակ իրավունքները: Ֆիզիկական օբյեկտների սեփականությունը.....	17
1.1.3.Սեփականության հարաբերական իրավունքները: Պայմանագրային պարտավորությունները.....	22
1.2.Ինստիտուցիոնալ միջավայրի ազդեցությունը տնտեսական զարգացման վրա.....	28
Գլուխ 2. Ինստիտուցիոնալ միջավայրի քանակական չափումը.....	37
2.1. Ինստիտուտների դասակարգումը.....	37
2.2.Ինստիտուցիոնալ միջավայրը չափող ցուցանիշների դասակարգումը.....	39
Գլուխ 3. Մակրոտնտեսական ցուցանիշների վրա ինստիտուցիոնալ միջավայրի ազդեցության գնահատումը ընտրված երկրների համար.....	78
3.1.Ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող համալիր ինդեքսի կառուցում .....	78
3.2.Ինստիտուցիոնալ միջավայրի որակի տարբերությունները պայմանավորող գործոնների բացահայտումը ձգողականության մոդելի գնահատում.....	83
3.2.1. Ձգողականության մոդելի կիրառումը երկրների ինստիտուցիոնալ միջավայրի հեռավորությունը չափելու համար.....	83
3.2.2.Ձգողականության մոդելի ընդլայնումը տարածաժամանակային տվյալների մոդելավորման համար .....	98
Եզրակացություն.....	102
Օգտագործված գրականության ցանկ.....	106
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	110

## Ներածություն

Տնտեսագիտության կարևորագույն խնդիրներից է պարզել, թե ինչն է երկրների տնտեսական աճի ու զարգացման տարբերությունների պատճառը: Նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտության զարգացումից ի վեր ընդունվում է ինստիտուտների ազդեցությունը տնտեսական գործունեության արդյունքների վրա: Մյուս հիմնարար գործոնները տնտեսվարման վրա ազդում են ավելի շուտ ինստիտուտների ձևավորման վրա ազդելու միջոցով: Երկրների տնտեսական հաջողությունների տարբերությունների պատճառը ինստիտուտների, տնտեսության աշխատանքը կարգավորող կանոնների, մարդկանց մոտիվացնող խթանների տարբերություններն են: Լավորակ ինստիտուտները, որոնք բնութագրվում են ապահով սեփականության իրավունքներով, օրենքի և կարգուկանոնի գերակայությամբ, շուկաների պետական պաշտպանությամբ, գործարարության համար բաց մուտքով, պայմանագրերի բարեխիղճ կատարմամբ, կրթության հասանելիությամբ և քաղաքացիների մեծամասնության համար հասանելի հնարավորություններով, այսինքն ինստիտուտներ, որոնք խթաններ են ստեղծում ներդրումների և նորարարության համար, նպաստում են տնտեսական աճին: Սակայն ինստիտուտների ազդեցությունը առավել ընդգծված դրսևորվում է երկարաժամկետ տնտեսական աճի ու զարգացման վրա:

Անցումային փուլում շուկայական տնտեսության ձևավորման կարևորագույն քայլը առաջին հերթին ֆորմալ ինստիտուտների ներդրումն է: Առաջին քայլը տնտեսական գործունեությունը բնութագրող օրենսդրության ընդունումն է: Սակայն օրենսդրության առկայությունը ոչ միշտ է ուղեկցվում դրա արդյունավետ կիրառմամբ՝ արդյունավետություն երկրի արտադրական հնարավորությունների սահմանին հասնելու իմաստով: Արդյունավետության տեսանկյունից ինստիտուտները կարող են բարձրացնել, իջեցնել այն կամ չեզոք լինել: Պարադոքսը կայանում է նրանում, որ անցումային տնտեսություններում հաճախ արդյունավետ ֆորմալ ինստիտուտների ներդրումը ուղեկցվում է տնտեսական համակարգի արդյունավետության անկմամբ: Պարադոքսի բացատրության հիմքում ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների կոնֆլիկտն է:

Ի տարբերություն ֆորմալ ինստիտուտների, ոչ ֆորմալ ինստիտուտների փոփոխությունը երկարատև գործընթաց է: Նախկին ԽՍՀՄ անցումային տնտեսությունները ժառանգել են պլանային տնտեսությունից մի շարք ինստիտուցիոնալ հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են նոր ինստիտուտների կայացումը: Անցումային փուլում առավել արդյունավետ անցում կատարեցին Արևելյան Եվրոպայի երկրները, ինչը պայամանավորված էր դրանց ունեցած եվրոպական քաղաքակրթության հիմքով և Եվրոպական միությանը ինտեգրմամբ: Նորանկախ ՀՀ – ի ինստիտուցիոնալ միջավայրը լավագույններից մեկն է հետխորհրդային տասնհինգ հանրապետությունների շարքում, ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող ցուցանիշների մեծամասնությամբ առաջ է նաև հարևան երկրներից, բացառությամբ Վրաստանի: Այս արդյունքները արտացոլում են ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրի բարելավման և տնտեսական զարգացման մեծ ներուժի առկայությունը:

Աշխատանքի **նպատակն** է ներկայացնել ինստիտուցիոնալ միջավայրի ազդեցությունը տնտեսական գործունեության կազմակերպման վրա, կապը երկրի մակրոտնտեսական կատարողականի հետ, վիճակագրական տվյալների և էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ պարզել ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրի դիրքը զարգացած, զարգացող և անցումային տնտեսությունների շարքում, ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման միտումները, ներուժն ու զարգացման այլընտրանքային ուղիները: Այդ նպատակի իրականացման համար աշխատանքում առաջ են քաշվել և լուծվել հետևյալ հետազոտական **խնդիրները**.

ա) նորինստիտուցիոնալ տնտեսագիտության մտքի ուղղության ուսումնասիրությամբ սահմանել ինստիտուցիոնալ միջավայրը և այն ձևավորող հիմնական հասկացությունները,

բ) ուսումնասիրել ինստիտուցիոնալ միջավայրում առաջացող խնդիրները, դրանց պատճառները և լուծման ուղիները,

գ) ուսումնասիրել ինստիտուցիոնալ միջավայրի դինամիկան աշխարհի տարբեր երկրներում, երկրների դիրքը ինստիտուցիոնալ միջավայրի որակի տեսանկյունից,

դ) պարզել անցումային տնտեսություններում ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման հետագծի տարբերությունները և գտնել այդ տարբերությունների հնարավոր պատճառները,

ե) կառուցել ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող համալիր ցուցիչ,

զ) գտնել ինստիտուցիոնալ միջավայրի կապը երկրների բարեկեցությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների հետ,

է) կառուցել ձգողականության մոդել՝ համալիր ցուցիչի կիրառությամբ,

ը) գտնել երկրների ինստիտուցիոնալ հեռավորությունները, հեռավորությունը պայմանավորող հիմնական գործոնները, տարբեր երկրների միջև ինստիտուցիոնալ հեռավորության դրսևորվող փոփոխությունները ժամանակի ընթացքում և ակնկալվող փոփոխությունները երկարաժամկետ հատվածում:

Աշխատանքի հետազոտության **օբյեկտը** ՀՀ և ընտրված երկրների ինստիտուցիոնալ միջավայրն է, հետազոտության **առարկան** ինստիտուցիոնալ միջավայրի և բարեկեցությունը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների հետ կապի պարզումը, ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման վրա ազդող գործոնների բացահայտումը:

Աշխատանքի հետազոտության թեմայի **արդիականությունը** պայմանավորված է ինչպես ՀՀ - ում, այնպես էլ աշխարհի մյուս երկրներում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական իրադարձությունների, տնտեսական միություններում ընդգրկվելու և դրանցից հեռանալու, առևտրային հարաբերությունների և պայմանների փոփոխությունների ազդեցության հնարավոր հետևանքների պարզման , ինչպես նաև ՀՀ երկարաժամկետ զարգացման հնարավորությունների վրա ինստիտուցիոնալ միջավայրի ազդեցության պարզման անհրաժեշտությամբ:

Աշխատանքի **կիրառական նշանակությունը** կայանում է երկրների առևտրային, տնտեսական քաղաքականությունները իրականացնելիս, երկրի զարգացման ռազմավարական ծրագրերը մշակելիս համապատասխան մարմինների կողմից հետազոտությունից բխող եզրակացությունների օգտագործման հնարավորությամբ:

Վերլուծության նպատակով օգտագործվել են SPSS, Eviews կիրառական ծրագրերի փաթեթները: Էկոնոմետրիկ մոդելավորումը և տնտեսական վերլուծությունները իրականացվել են Համաշխարհային բանկի, Freedom house, Heritage foundation, Fraser institute, Prs Group, Transparency International կազմակերպությունների, Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող վիճակագրական տվյալների հիման վրա:

## **Գլուխ 1. ՆԵՈՒՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ**

### ***1.1. Նեոինստիտուցիոնալ տնտեսագիտության հիմնադրույթները***

Նեոհինստիտուցիոնալ տնտեսագիտության (այսուհետ ՆԻՏ) առանցքային գաղափարն այն է, որ ինստիտուտները ազդում են տնտեսական գործունեության վրա. ինստիտուտները նշանակություն ունեն: Անգամ նորդասական դպրոցի հիմնադիր Մարշալը ընդունում էր այն փաստը, որ ինստիտուտները ազդում են տնտեսվարողների վարքագծի վրա [27,1]: Սակայն, նորդասական տեսության զարգացման ընթացքում ինստիտուտները հաշվի չեն առնվել տեսաբանների կողմից: Օպտիմալության պայմանները, լինելով պարզ տեխնիկական պահանջներ, չունեն գաղափարական նշանակություն: Անկախ երկրի քաղաքական գաղափարախոսությունից համարվում է, որ, եթե երկրի արտադրությունը և ռեսուրսների ալոկացիան բավարարում են օպտիմալացման պայմաններին, ապա դրանք կարող են բարելավել քաղաքացիների բարեկեցությունը: Փաստորեն, նորդասական տեսությունը ինստիտուցիոնալ տեսանկյունից չեզոք է, ինչն էլ հանդիսանում է նրա թե՛ ուժեղ և թե՛ թույլ կողմը: Նորդասական դպրոցի քննադատությունը տրվել է դեռևս պատմական դպրոցի և հին ինստիտուցիոնալիստների կողմից, ովքեր առհասարակ ժխտում էին աբստրակտ մոդելների, դիֆերենցիալ հաշվի կիրառելիությունը տնտեսությունը մեկնաբանելիս և առավել կարևորություն էին տալիս ազգի պատմությանը, մարդկային հոգեբանությանը, սոցիոլոգիային և այլն [27,1] : ՆԻՏ - ի առաջացման նպատակը նորդասական տեսության ոչ թե ժխտումն էր, այլ առավել իրատեսական և կիրառելի դարձնելն էր: ՆԻՏ - ը չի ժխտում մարժինալիզմը, այլ ձևափոխում է կամ ավելացնում որոշակի հիմնական ենթադրություններ: ՆԻՏ - ը տնտեսագիտության համեմատաբար նոր և դեռևս զարգացման ընթացքում գտնվող ուղղություն է, որը հիմնվում է հետևյալ հիմնական հասկացությունների և վարկածների վրա[27,3].

***Մեթոդոլոգիական ինդիվիդուալիզմ***, ըստ որի մարդիկ տարբեր են և ունեն տարբեր նախասիրություններ, նպատակներ, գաղափարներ: Այսինքն, «հասարակություն», «պետություն», «ֆիրմա», «քաղաքական կուսակցություն» և այլ հասկացություններ ուսումնասիրելիս պետք չէ այդ կոլեկտիվ օբյեկտների վարքագիծը դիտարկել որպես կոլեկտիվի տեսքով հանդես եկող անհատի



վարքագիծ: Այսուհետ ուշադրությունը պետք է սևեռել **այդ օբյեկտներում գործող անհատների** վարքագծի վրա[27,3]:

**Մաքսիմալացում:** Անհատները հետապնդում են սեփական շահ և ձգտում մաքսիմալացնել իրենց օգտակարությունը՝ գործող ինստիտուցիոնալ միջավայրի պայմաններում:

**Ռացիոնալ անհատ:** ՆԻՏ գրականությունում այս հասկացության երկու մոտեցում է առկա: Ըստ առաջին մոտեցման անհատները կատարյալ ռացիոնալ են այնպես, ինչպես նորդասական տեսությունում: Սակայն ՆԻՏ – ի առավել ժամանակակից հեղինակների մոտ ընդունվում է անկատար ռացիոնալությունը: Մասնավորապես կիրառվում է **սահմանափակ ռացիոնալություն** տերմինը (Simon, 1957): Անհատները չունեն բավարար տեղեկատվություն, իսկ տեղեկատվություն ձեռք բերելը որոշակի ծախսեր է ենթադրում, մյուս կողմից սահմանափակ է նաև ձեռք բերված տեղեկատվության վերլուծման հնարավորությունները[27,3]:

**Օպորտունիստական վարքագիծ:** Թեև սահմանափակ ռացիոնալության ենթադրությունը արտացոլում է այն հանգամանքը, որ մարդը ավելին է, քան «հաշվիչ մեքենան», այնուամենայնիվ գրականությունում նշվում է, որ մարդիկ ունենում են նաև վատ հատկանիշներ: Օրինակ՝ շատ մարդիկ կարող են անազնիվ լինել այս կամ այն պատճառով, ինչն էլ իր համապատասխան ազդեցությունն է ունենում տնտեսական գործունեության վրա[27,5]: Եթե որևէ նորմ խախտելիս անհատի սահմանային օգուտը գերազանցում է սահմանային ծախսերը, ապա ռացիոնալ անհատը կխախտի նորմը:

**Տնտեսական հասարակություն:** Ընդհանուր դեպքում տնտեսական հասարակությունը անհատների և ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների ամբողջությունն է, որոնք հասարակության յուրաքանչյուր անդամի վերագրում են վավերացված սեփականության իրավունքներ: Սեփականության իրավունքը ամենալայն սահմանամաբ ֆիզիկական օբյեկտների և ինտելեկտուալ աշխատանքի օգտագործումով տնտեսական օգուտների ստացման, ինչպես նաև այլ անհատներից որոշակի վարքագիծ պահանջելու իրավունքն է [27,6]:

**Կառավարման կառուցվածք:** Տնտեսությունում գործող սեփականության իրավունքների ինստիտուտը ձևավորվում և երաշխավորվում է կառավարման կառուցվածքի կամ կարգի միջոցով: Վերջինս ֆորմալ և ոչ ֆորմալ կանոնների և դրանց հարկադրման գործիքների համակարգն է [27,6]:

**Ինստիտուտներ:** Ըստ մի սահմանման ինստիտուտը ֆորմալ և ոչ ֆորմալ կանոնների և դրանց հարկադրման մեխանիզմների ամբողջությունն է (Schmoller 1900, 61 ; Nee and Ingram 1998, 19): Ինստիտուտի նպատակը անհատի վարքագիծը որոշակի ուղղության վրա դնելն է: *Ինստիտուտը կարգավորում է ամենօրյա գործունեությունը և նվազեցնում մարդկային հարաբերություններում առկա անորոշությունը* (North 1990,239): Օստրոմը տալիս է ինստիտուտի առավել ամբողջական սահմանում, այն է. «*Ինստիտուտները կարող են սահմանվել որպես գործող կանոնների հավաքածուներ, որոնք թույլ են տալիս որոշել, թե ո՞վ է իրավասու որոշումներ կայացնել որոշակի դաշտում, ո՞ր գործողություններն են թույլատրվում կամ սահմանափակվում, ագրեգացման ի՞նչ կանոններ են կիրառվում, ի՞նչ գործընթացների պետք է հետևել, ի՞նչ տեղեկատվություն կարելի է տալ կամ չտալ և թե ի՞նչ պարզևավճարներ կարող են ստանալ անհատները՝ կախված իրենց գործողություններից: Բոլոր կանոնները պարունակում են հրահանգներ, որոնք արգելում, թույլատրում կամ պահանջում են որոշակի գործողություններ (1990,51)*»: Արդյունավետ գործելու դեպքում ինստիտուտները հանդիսանում են անորոշությունը կրճատող, որոշում կայացնելը պարզեցրող, տնտեսվարողների համագործակցությունը խթանող գործիք, ինչը թույլ է տալիս կրճատել տնտեսական գործունեության կոորդինացման ծախսերը:

**Ինստիտուտների էվոլյուցիան:** Ըստ մի տեսակետի, ինստիտուտները մշակվում են դիտավորյալ կերպով: Տարբեր իրավասու մարմիններ (պառլամենտ, ձեռնարկատեր, թիմ)՝ լինելով կատարյալ ռացիոնալ սուբյեկտներ, կարող են ներդնել համապատասխան ինստիտուցիոնալ կառուցվածք: Ըստ մեկ այլ տեսակետի ինստիտուտները ձևավորվում են ինքնաբերաբար կերպով ոչ ֆորմալ նորմերի հիման վրա: Այս դեպքում դրանք կարող են ձևավորվել առանց հատուկ համաձայնության, իրավական հարկադրանքի, անգամ առանց հաշվի առնելու

հանրային շահերը (Menger, 1963): Հայեկը այս գործընթացը անվանում է էվոլյուցիոն ռացիոնալիզմ: Առաջին մոտեցման դեպքում *կանոնների կարարումը երաշխավորում է երրորդ կողմը (օրենդրական հարկադրանք)*, երկրորդ մոտեցման դեպքում տնտեսավարողները ենթարկվում են կանոններին *ինքնահարկադրմամբ: Երկարաժամկետ հատվածում առավել կայուն են ինքնարկադրող ինստիտուտները:* Ինքնահարկադրումը կարող է մեկնաբանվել խաղերի տեսության միջոցով, այս դեպքում ինստիտուտը սահմանվում է որպես խաղի հավասարակշիռ վիճակ, անընդհատ կրկնվող խաղի Նէշի հավասարակշռություն: Նէշի հավասարակշռությունը առավել ճիշտ է մեկնաբանել որպես երկարաժամկետ ճշգրտվող գործընթացի, «անտեսանելի ձեռք մեխանիզմի» վերջնական արդյունք, որի ընթացքում խաղացողները կատարյալ տեղեկացված չեն: Ինքնահարկադրանքը մեկ այլ մեկնաբանությամբ հանդիսանում է հասարակության հարկադրանքի արդյունք[27,9]:

**Կազմակերպություններ:** Ինստիտուտները և դրանցից օգտվող մարդկանց ամբողջությունը կոչվում է կազմակերպություն (North,1990): Կազմակերպություն հասկացությունը ներառում է ֆորմալ (ֆիրմա, քաղաք) և ոչ ֆորմալ կազմակերպությունները (շուկա): Իրականում կազմակերպությունները չեն լինում զուտ ֆորմալ կամ ոչ ֆորմալ: *Ֆորմալ կազմակերպությունը կարելի է սահմանել որպես անհատների խումբ, որը ձգտում է հասնել որևէ միասնական նպատակի* (Arrow 1970,224): Կազմակերպության վերահսկողությունը իրականացվում է ներքին ինստիտուցիոնալ միջավայրի միջոցով, որը ձևավորվում է այնպես, որ ճշգրտորեն մաքսիմալացնի կազմակերպության նպատակային ֆունկցիան[27,10]:

**Հասարակական կապերը:** Հասարակական կապերը ներառում են *մասնակիցներին, յուրաքանչյուր երկու մասնակիցների միջև փոխհարաբերությունները, մասնակիցների բնութագրիչները* (Wasserman and Faust 1994,89): Տիպիկ փոխհարաբերության օրինակ է *գործարքը:* Որպես բնութագրիչներ հանդես են գալիս սեռը, ռասան, բնակավայրը և այլն:

**Հասարակական/սոցիալական/ կապիտալը** տնտեսական մեկնաբանությամբ իրենից ներկայացնում է հասարակության մասնակիցների միջև

փոխհարաբերությունների ներկա արժեքը: Այլ մասնակիցների հետ կապերի հաստատումը պահանջում է սկզբնական ներդրումներ կատարել հասարակական հարաբերություններում: Սոցիալական կապիտալը պատկանում է հասարակության մասնակիցներին միաժամանակ և որևէ մասնակից չունի բացարձակ սեփականության իրավունք դրա նկատմամբ[27,11]: Սոցիալական կապիտալը ազդում է մասնակցի արտադրական ֆունկցիայի եկամտաբերության վրա: Գործընկերների, ընկերների, հաճախորդների հարաբերությունները ֆինանսական և մարդկային կապիտալներից շահույթ ստանալու հնարավորություններ են ստեղծում (Burt,1992,58): *Երբ որևէ սոցիալական խումբ ենթարկվում է որոշակի նորմերի, այդ նորմերը սկսում են հանդես գալ որպես **սոցիալական կապիտալ**: Նորմերը դառնում են սոցիալական կապիտալ այնքանով, որքանով որ դրանք ի վիճակի են լուծել սոցիալական դիլեմաները* (Brinton and Nee, 1998,9):

Սրանք այն հիմնադրույթներն էին, որոնց վրա հիմնվում է ՆԻՏ – ը: Ամփոփելով ՆԻՏ - ի հիմնադրույթները կարող ենք եզրակացնել, որ ՆԻՏ- ի ուսումնասիրության հիմնական տարրերն են հանդիսանում.

- ✓ տրանսակցիոն ծախսերը,
- ✓ սեփականության իրավունքները,
- ✓ գործարքային/պայմանագրային հարաբերությունները:

### **1.1.1. Տրանսակցիոն/ գործառնական ծախսերը**

Տեղի է ունեցել գործարք, եթե ապրանքը կամ ծառայությունը փոխանցվել է տեխնոլոգիապես տարանջատվող հարթակով: Գործողության մի փուլը ավարտվում է և սկսվում է մյուսը (27,49): Այս մեկնաբանությամբ գործարք հասկացությունը վերաբերում է այն իրավիճակներին, երբ փաստացի տեղի է ունենում ռեսուրսների ֆիզիկական փոխանցում, առաքում: Այս առաքումը կարող է տեղի ունենալ ֆիրմաների ներսում կամ շուկաների միջև: Այսպիսով կարող ենք տարանջատել ներքին/ներֆիրմայական և արտաքին/շուկայական գործարքներ: Ներֆիրմայական գործարքների հիմնական գաղափարը լավ մեկնաբանել է դեռևս Սմիթը գնդաստեղի արտադրության հայտնի օրինակով: Ըստ *Քոմոնսի*

գործարքը անհատների միջև ֆիզիկական իրերի նկատմամբ սեփականության իրավունքի օտարումն ու ձեռքբերումն է (27,50): Այս դեպքում ևս սահմանումը ենթադրում է ռեսուրսների փոխանցում, բայց այս դեպքում իրավական տեսանկյունից: Քոմոնսը նաև առանձնացնում է գործարքի երեք տեսակ՝ առևտրային, կառավարման, ռացիոնացման: Ինստիտուտների տնտեսական վերլուծության օբյեկտը միայն տնտեսական գործարքները չեն, այլ նաև այլ «հասարակական գործողություններն են» (Weber, 1968): Առավել կարևոր են այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են սոցիալական հարաբերությունները հաստատելու, պահպանելու կամ փոխելու համար: Գործարքը անբացահայտ կերպով պարունակում է երեք տեսակ հասարակական հարաբերություն՝ կոնֆլիկտ, կախվածություն և կարգ: Էռոուն (Arrow) սահմանում է տրանսակցիոն ծախսերը որպես տնտեսական համակարգը աշխատացնելու ծախսեր: *Տրանսակցիոն ծախսերը հասարակությունում ընդունված սեփականության իրավունքների և ազատությունների օտարման և վերագրման ընթացքում անհատների կողմից ստանձնված պարտավորությունների կատարումը պլանավորելու, ադապտացնելու և վերահսկելու վրա ծախսվող ռեսուրսների արժեքն է [4,46]:* Ինստիտուտների արդյունավետությունը բացատրվում է տրանսակցիոն ծախսերի տնտեսման հնարավորությամբ: Տրանսակցիոն ծախսեր կատարելու անհրաժեշտությունը բխում է կողմերի միջև շահերի բախումից և անորոշությունից: Տրանսակցիոն ծախսերը լինում են շուկայական, կառավարչական, պետական: Յուրաքանչյուր տեսակի մեջ կարելի է առանձնացնել նաև ֆիքսված տրանսակցիոն ծախսեր, որոնք ինստիտուցիոնալ միջավայրի գործարկման համար անհրաժեշտ սպեցիֆիկ ներդրումներն են, և փոփոխուն տրանսակցիոն ծախսեր, որոնց մեծությունը կախված է գործարքների թվից և ծավալից [27,48]:

**Շուկայական տրանսակցիոն ծախսերը** բաղկացած են տեղեկատվության ձեռքբերման և գործարքի կնքման/ փոխանակման ծախսերից: Տեղեկատվության հետ կապված ծախսերը կարևոր են, քանի որ հենց անկատար տեղեկատվությունն է գործառնական ծախսերի առաջացման պատճառը, սակայն

գործարքի պայմանների ամբողջական պահպանման համար միայն տեղեկատվությունը քիչ է: Առկա է շուկայական անորոշություն: Որոշում կայացրողները չգիտեն, թե ով է ուզում գնել կամ վաճառել որևէ ապրանքը և ինչ պայմաններով: Արդյունավետ փոխանակում իրականացնելու համար գործարքի մասնակիցները միմյանց գտնելուց հետո ստիպված են նաև բանակցել: Հնարավոր է, որ գործարքի կատարման իրավական երաշխիքի, հարկադրանքի պահանջ առաջանա[27,59]: Շուկայից օգտվելու ծախսերը ընդհանուր առմամբ կարող են դասակարգվել հետևյալ տեսակների.

- ✓ Պայմանագրի նախապատրաստման ծախսեր,
- ✓ Պայմանագրի կնքման ծախսեր,
- ✓ Պայմանագրային պարտականությունների կատարման, վերահսկման, հարկադրման ծախսեր,
- ✓ Հասարակական հարաբերությունների հաստատման և պահպանման ծախսեր[27,54]:


**Կառավարչական տրանսակցիոն ծախսերը** կարելի է տարանջատել երկու հիմնական խմբի.

- ✓ Ծախսեր կապված կազմակերպության գործարկման, պահպանման, փոփոխման հետ, որոնք ներառում են անձնակազմի կառավարումը, տեղեկատվական տեխնոլոգիաներում ներդրումները, պաշտպանությունը միաձուլումներից, հասարակայնության հետ կապերը: Սրանք ֆիքսված տրանսակցիոն ծախսերն են:
- ✓ Կազմակերպությունը աշխատացնելու ծախսեր, որոնցից են տեղեկատվական ծախսեր՝ կապված կառավարիչների կառավարման, որոշումների կայացման, բանակցությունների, գների սահմանման և փոփոխման, աշխատողների կատարողականը գնահատելու և այլնի հետ, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների փաստացի առաքման հետ[27,55]:

Շուկայական և կառավարչական միջավայրը գործում է պետական միջավայրում: Ընդհանուր առմամբ **պետական տրանսակցիոն ծախսերը** հանրային բարիքների մատուցման հետ կապված ծախսերն են, որոնք կառավարչական

տրանսակցիոն ծախսերի համարժեքն են պետության մասշտաբով և լինում են՝ ծախսեր համակարգի ֆորմալ և ոչ ֆորմալ պետական կառուցվածքների ներդրման, գործարկման, պահպանման և փոփոխման հետ, որոնք ներառում են իրավական դաշտը, բանակը, կրթական համակարգը, կառավարման կառուցվածքի որոշումը և այլն: Մյուս խումբ ծախսերը կապված են պետությունը աշխատացնելու հետ, որոնք «սուվերեն պարտականությունների» կատարման հետ կապված ընթացիկ ծախսերն են[27,56]:

Ենթադրենք, արտադրողը ցանկանում է վաճառել 1կգ ցորեն սպառողին, ով կստանա 0,9 կգ: Իրական տրանսակցիոն ծախսը 0,1կգ - ն է: Գործարքը կարող ենք ներկայացնել «գործարքի ֆունկցիայով»՝  $Y_c = F(Y_p)$ , որտեղ սպառողի կողմից ստացվող քանակությունը ֆունկցիա է արտադրողի կողմից խոստացված՝ արտադրանքի քանակությունից: Պարզ է, որ տրանսակցիոն կորը ցած է գտնվում կիսորդից, իսկ այս պարագայում տրանսակցիոն ծախսի մեծությունը BD հատվածն է: Տրանսակցիոն կորի թեքությունը կոչվում է գործարքի սահմանային արտադրողականություն [27,66]: Ծայրահեղ դեպքում տրանսակցիոն ծախսը կարող է այնքան մեծ լինել, որ գործարք առհասարակ տեղի չունենա՝ ցորենի պահանջարկը հավասարվի զրոյի: Այս իրավիճակում տեղի կունենա «շուկայի ձախողում»՝ տնտեսությունում կբացակայի ցորենի արտադրությունը և սպառումը:



**Գծապատկեր 1: Տրանսակցիոն ծախսերը գործարքում [27,66]**

Տնտեսական աճի խթանման համար շատ հաճախ բավարար է բարելավել ինստիտուցիոնալ միջավայրը, որը թույլ կտա նվազագույնին հասցնել տրանսակցիոն ծախսերը, քան թե փոփոխել և վարել տնտեսական քաղաքականություն՝ բարձր տրանսակցիոն ծախսերի ուղեկցությամբ: Տրանսակցիոն ծախսերի առանձնահատկությունն է այն, որ դրանց մեծությունը կախված է անհատների վարքագծից: Որքան մեծ է հասարակությունում փոխադարձ վստահության աստիճանը, այնքան ցածր կլինեն վերահսկման և հարկադրման հետ կապված ծախսերը:

**1.1.2. Սեփականության բացարձակ իրավունքները: Ֆիզիկական օբյեկտների սեփականությունը**

Դրական տրանսակցիոն ծախսերով աշխարհում ռեսուրսների սեփականության ձևը ազդում է տնտեսական արդյունքի վրա: Պատճառն այն է, որ այս պայմաններում տնտեսական շարժառիթները կախված են սեփականության ձևից և դրա փոփոխման դեպքում փոխվում է նաև տնտեսվարողների վարքագիծը: Կարելի է տարանջատել սեփականության երկու հիմնական ձև՝ մասնավոր և պետական: Պատմությունը ցույց է տվել, որ մասնավոր սեփականությունը առավել արդյունավետ ձև է: Սոցիալիստական պետությունում աշխատողները չունեն կազմակերպության կապիտալին մասնակցության իրավունք, նրանք կարող են միայն օգտագործել այն եկամտաբեր տարբերակներով: Հետևաբար, աշխատակիցներին առավել հետաքրքրում է կազմակերպության գործունեությունը ժամանակի այնպիսի հորիզոնով, որի ընթացքում նրանք աշխատելու են: Այս պայմաններում, աշխատակիցները առավել հետաքրքրված են կարճաժամկետ նախագծերով և ներդրումներով, իսկ թե ինչ կլինի իրենցից հետո տնտեսապետ



*շահավետը չէ մտածել:* Արդյունքում սոցիալիստական ֆիրման չի գեներացնում շարժառիթներ տնտեսական կատարողականը կատարելագործելու համար[27,84]: Մասնավոր կազմակերպությունում, երբ աշխատակցին տրվում է կապիտալում մասնակցության իրավունք, աշխատակիցների նպատակն է դառնում մաքսիմալացնել ֆիրմայի ներկա արժեքը: Հետևաբար երկարաժամկետ նախագծերը և գործունեության կատարելագործումը կենսական կարևորություն են ստանում[27,85]:

Իրավաբանական գրականությունում սեփականության իրավունք տերմինի երկու հիմնական մեկնաբանություն կարելի է հանդիպել: Մայրցամաքային քաղաքացիական իրավունքում կամ Հռոմեական իրավունքում սեփականության իրավունքը վերագրվում է ֆիզիկական օբյեկտներին և նյութական արժեքներին: Սեփականության հիմնական տարրերն են հանդիսանում ֆիզիկական օբյեկտների օգտագործման, դրանցից եկամտի ստացման, դրանց կառավարման/տնօրինման իրավունքները: Անգլոամերիկյան ընդհանուր իրավունքը սեփականության իրավունքը վերագրում է ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական արժեքներին, մասնավորապես պատենտներին, հեղինակային իրավունքներին, պայմանագրային իրավունքներին: Հողի նկատմամբ սեփականության իրավունքի քաղաքացիական և անգլոամերիկյան տարբերակների տարբերությունը կարելի է բացատրել հետևյալ օրինակով. «Ըստ հռոմեական իրավունքի սեփականությունը արկղ է, որի վրա գրված է «սեփականություն»: Ում ձեռքում որ գտնվում է արկղը նա էլ հանդիսանում է սեփականատերը: Արկղում կան տարբեր իրավունքներ, որոնք սեփականատերը կարող է փոխանցել այլ մարդկանց: Սակայն քանի դեռ արկղը իր ձեռքում է, նա է հանդիսանում ֆիզիկական օբյեկտի սեփականատերը, եթե անգամ արկղը դատարկվել է իրավունքներից [27,86]: Անգլոամերիկյան իրավունքում արկղ չկա: Այստեղ կան օրինական շահերի հավաքածուներ: Սեփականատեր հանդիսանում է նա, ով ունի օրինական շահերի ամենամեծ հավաքածուն և, եթե նա հավաքածուից իրավունքներ է փոխանցում, ապա իր սեփականատիրական ուժը փոքրանում է (Merryman 1974, 927)»: Սեփականության իրավունքի մեկնաբանության երրորդ տարբերակում սեփականության

իրավունքները «ապահովվում են էթիկայի, հասարակական ավանդույթների, արտաքսման ուժով» (Alchian 1977,129) և այլ ոչ իրավական գործիքներով, ինչպես օրինակ՝ ինքնահարկադրումն է (Telser 1980):

Սեփականության իրավունքները լինում են բացարձակ և հարաբերական: *Սեփականության բացարձակ իրավունքները պատկանում են սեփականատիրոջը և կիրառվում են մնացած բոլոր անձանց դեմ, իսկ սեփականության հարաբերական իրավունքները սեփականատիրոջը իրավունք են ընձեռում ուժ գործադրել սահմանափակ թվով մարդկանց վրա, օրինակ՝ պարտապանի վրա:* Որևէ երկրի քաղաքացի հանդիսանալը անհատի տարրական սեփականության իրավունքն է: Քաղաքացիության տնտեսական արժեքը աճում է, երբ աճում է երկրի բարեկեցությունը և տնտեսական հնարավորությունները: Անհատի սեփականության իրավունքներից է նաև սոցիալական կապիտալի սեփականության իրավունքը:

**Մասնավոր սեփականության հիմնահարցը:** Դրական տրանսակցիոն ծախսերով աշխարհում սեփականության ձևը ազդում է գործունեության արդյունավետության վրա: Սեփականությանը առնչվող հարաբերություններում կարելի է առանձնացնել երկու տիպի գործառնական ծախսեր՝


- ✓ *սեփականության իրավունքների որոշման և վերագրման,*
- ✓ *սեփականության իրավունքների վերահսկման և հարկադրման հետ կապված ծախսեր:*

Այս երկու տիպի ծախսերը միասին կոչվում են **բացառման** ծախսեր: Արդյունավետության խնդիրներ առաջանում են այն դեպքում, երբ այս տրանսակցիոն ծախսերը մեծ են: *Տրանսակցիոն ծախսերի կրճատման ուղին ինստիտուցիոնալ միջավայրի բարելավումն է այն աստիճան, որ տնտեսավարողների գործունեության վերահսկումը և կարգավորումը իրականացվի* **ինքնահարկադրմամբ:** Սեփականության իրավունքների որոշման ծախսերը ֆիքսված են, իսկ վերահսկման ծախսերը փոփոխուն են և պարբերական (Eggertsson 1990, 96): Պետությունում առկա վերաբերմունքը մասնավոր սեփականության նկատմամբ տնտեսական զարգացման վրա ազդող կարևոր

գործոններից է: ***Որքան մեծ է վստահությունը սեփականության իրավունքի նկատմամբ, այնքան շատ ներդրումներ կկատարվեն սեփականության արտադրողականությունը բարձրացնելու համար*** (Riker and Weimer 1995,94):

Սեփականության իրավունքների համապատասխան սպեցիֆիկացիայի բացակայության դեպքում առաջանում են ***արտաքին էֆեկտներ: Սեփականության իրավունքների սպեցիֆիկացիայի հիմնական խնդիրն է արտաքին էֆեկտների «ինտերալիզացիան»***: Արտաքին էֆեկտը իրավիճակ է, որի դեպքում անհատի տնտեսական դիրքի վրա ազդում են այլ անհատների՝ սպառման և արտադրության հետ կապված գործողությունները: Արտաքին էֆեկտների շուկայի բացակայության հետևանքով համակարգում տեղի չի ունենում Պարետո արդյունավետ ալոկացիա: Արտաքին էֆեկտները կարող են լինել վնասակար կամ օգտակար: Մասնավոր սեփականությամբ տնտեսությունում արդյոք անհատը կտուժի, թե կկարողանա օգուտ ստանալ արտաքին էֆեկտներից, էապես կախված է սեփականության իրավունքների որոշվածությունից: Լավ գործող կապիտալիստական համակարգում արտաքին էֆեկտները կարող են ինտերնալիզացվել համապատասխան սեփականության իրավունքների փոխանցմամբ: Արտաքին էֆեկտների ինտերնալիզացման անհրաժեշտ պայմանները ներառում են՝ սեփականության իրավունքների հստակ սպեցիֆիկացիա, դրանք փոխանցելու ազատություն: Քուուզի կարևորագույն հայտնագործությունը այն էր, որ արտաքին էֆեկտներ առաջացրող գործողությունները կարող են փոխանակվել տուժող կողմի սեփականության իրավունքի հետ: Մեկնաբանենք հետևյալ օրինակով (Varian,1987)՝ A անհատը ծխող է, B՝ չծխող: Երկու բարիք է առկա՝ ծուխ և փող: Փողը օգտակար է երկուսի համար էլ, սակայն մեկը սիրում է ծխել, մյուսը ոչ: Յուրաքանչյուրը ունի սկզբնական ունեցվածք 100 միավոր, իսկ չծխողը՝ B - ն ունի մաքուր օդ պահանջելու իրավունք: Ելակետային իրավիճակը W -ն է, որտեղ ծխի քանակությունը զրո է: Չծխողը կարող է բարելավել իր բարեկեցությունը՝ վաճառելով իր սեփականության իրավունքը: Նոր հավասարակշիռ իրավիճակը G

կետում է, որտեղ երկու սպառողների անտարբերության կորերը առավել բարձր դիրքում են, իսկ բաշխումը Պարետո արդյունավետ է:



**Գծապատկեր 2: Արդարքին էֆեկտների հնարավորագրման օրինակ**

Երբ բացառման ծախսերը շատ մեծ են, պետական սեփականությունը հանդիսանում է սեփականության առավել արդյունավետ տարբերակ:

Անկախ արդյունավետությունից, սեփականության իրավունքների առաջացումը և զարգացումը պետության էվոյուցիայի արդյունքն է: Այն ընկալվում է որպես անցում բացարձակ միապետությունից դեմոկրատ հասարակության, ինչը համարվում է անցում դեպի «պետական արդյունավետության» (North 190,51): Սեփականության ինստիտուտը ինքնաբերաբար ձևավորվող ինստիտուտներից է (Sudgen 1989,86): Սակայն սեփականության իրավունքների կատարելագործումը իրականացվում է պետությունում օրենսդրական դաշտի հստակեցման և կարգավորման միջոցով, ինչը ժամանակատար գործընթաց է: Սակայն արդյունավետ հասարակական համագործակցության հնարավոր է հասնել այն դեպքում, երբ անհատները գիտակցում են այդ համագործակցությունում առկա ընդհանուր շահերը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ մասնավոր սեփականությունը բավարար պայման չէ մրցակցության խթանման և արդյունավետության համար: Այն կարող է դրսևորվել մենաշնորհների տեսքով, որի դեպքում համագործակցությունը հասարակության առավել նեղ շերտերի բարեկեցությունն է բարձրացնում:

### **1.1.3. Սեփականության հարաբերական իրավունքները: Պայմանագրային պարտավորությունները**

Սեփականության հարաբերական իրավունքները անհատի կամ պարտատիրոջ պահանջն են այլ անհատների կամ պարտապանի նկատմամբ: Այս դեպքում սեփականության հարաբերական իրավունքները կարող են ոտնահարվել պարտապանների կողմից: ՆԻՏ – ում այսպիսի իրավիճակները մեկնաբանվում են **օպորտունիստական վարքագիծ** տերմինի միջոցով: Պայմանագրային պարտավորությունները արտացոլում են Հյումի նշած բնության երեք օրենքների գաղափարը: Հյումը նշում է, որ. «սեփականության կայունությունը, դրա փոխանցումը համաձայնությամբ, խոստումների կատարումը այն երեք օրենքներն են, որոնցից կախված է մարդկային հասարակության խաղաղությունը և ապահովությունը» (Hume, 1739-40, 1969 578): Սա նշանակում է պայմանագրերի կնքման ազատություն և պարտավորությունների բարեխիղճ կատարում: Դրական տրանսակցիոն ծախսերով և սահմանափակ ռացիոնալությամբ աշխարհում այս սկզբունքների պահպանումը մեծ ռեսուրսներ է պահանջում: Պայմանագրի կնքման ազատությունը թույլ է տալիս մասնավոր սեփականատիրոջը փոխանցել իր իրավունքը կամ իրավունքի հետ կապված ակտիվը այնտեղ, որտեղ դրա արժեքը առավել բարձր է գնահատվում: Քանի որ պայմանագրերը կարող են հարկադրվել իրավական ուժով, միկրո մակարդակում մշակվում են օրենքներ:


Այսպես, պայմանագրային ազատությունը և դրա արդյունքում առաջացող մասնավոր ինքնավարությունը տնտեսական որոշումների կայացման ապակենտրոնացման իրավական արտացոլումն են: Այս ազատության սկզբունքը հանդիսանում է մրցակցային միջավայրի ձևավորման նախապայմանը: Բայց, մյուս կողմից, այս սկզբունքը մենաշնորհների առաջացման պատճառ կարող է հանդիսանալ: Հետևաբար պայմանագրային ազատությունը պետք է ուղեկցվի պետության կողմից մրցակցային կարգի ձևավորմամբ՝ օրենքներով:

Տրանսակցիոն ծախսերը մեծ դեր ունեն ցանկացած փոխանակման գործընթացում: Կարևորագույն խնդիրները, որոնք առաջանում են տրանսակցիոն ծախսերի և այն բանի հետևանքով, որ գործարքի կնքման և կատարման ժամանակահատվածները չեն համընկնում, պայմանավորված են **տեղեկատվական ասիմետրիայով (asymmetric information)** և **գործարքին բնորոշ (transaction-specific) ներդրումներով**: Վերջինս կարելի է մեկնաբանել որպես «կանխավճար» բուն գործարքի սպասարկումը սկսելու համար և այս իրավիճակը օպորտունիստական վարքագծի հնարավորություն է ստեղծում: Այս երկու խնդիրները ՆԻՏ – ի ուսումնասիրման կարևորագույն հարցերից են: Այս խնդիրները կարող են առաջանալ ինչպես գործարքի կնքումից առաջ, այնպես էլ հետո: Ուիլիամսոնը **օպորտունիզմը** սահմանում է հետևյալ կերպ. «խորամանկությամբ սեփական շահի որոնում: Ներառում է, բայց չի սահմանափակվում ստելը, գողանալը... առավել ընդհանուր, օպորտունիզմը վերաբերում է անկատար կամ աղճատված տեղեկատվության տրամադրմանը...» (1985, 47):

Այժմ առավել մանրամասն ներկայացնենք երկկողմ պայմանագրերի կնքման մինչ- և հետպայմանագրային օպորտունիզմը վաճառքի, լիզինգի, աշխատանքային և վարկային պայմանագրերի օրինակով:

**Վաճառքի պայմանագիրը:** Վաճառքը ակտիվի սեփականության իրավունքի փոխանցումն է պայմանագրի մի կողմից մյուս կողմին փոխադարձ համաձայնությամբ: Մինչգործարքային օպորտունիզմը վաճառքի պայմանագրում ինֆորմացիոն ասիմետրիայի հետևանք է, քանի որ վաճառողը առավել լավ

գիտի, թե ինչպիսին է իր վաճառած ապրանքը, քան գնորդը: Այս ֆենոմենը բացատրել է Ակերլոֆը իր «լիմոն» մոդելով (Akerlof, 1970): Ըստ այս գաղափարի լավ ապրանքը վատից տարբերակելու համար վաճառողները կարող են ավելի բարձր գին սահմանել: Սակայն երկարաժամկետ հատվածում գնի բարձրացումը վերջիվերջո կհանգեցնի պահանջարկի կրճատման և չեն վաճառվի ոչ լավ, ոչ էլ վատ ապրանքները[27,243]:



**Գծապատկեր 3: «Լիմոնի» շուկան [27,243]**

Գնի բարձրացմանը զուգընթաց պահանջարկը աճում, ապա՝ նվազում է: Այս իրավիճակում առաջարկը մշտապես կգերազանցի պահանջարկը և ապրանքի կամ ծառայության շուկան կվերանա: Այսպիսի մեկնաբանության օրինակներ են ապահովագրական շուկան (երբ բարձր ռիսկային ապահովագրվողների ծասերը ծածկելու նպատակով բարձրացվի պոլիսի գինը), զարգացող երկրների ֆինանսական շուկան (ռիսկայնությունից ելնելով վարկային տոկոսադրույքների բարձրացումը վերջիվերջո հանգեցնում է պահանջարկի կրճատման) [27,244]:

Հետգործարքային օպորտունիզմը կարող է հանդես գալ թաքնված **բարոյական վնասի (moral hazard)** տեսքով, որի դեպքում անհատը փոխում է վարքագիծը գործարքը կնքելուց հետո:

**Լիզինգի պայմանագիրը:** Ընդհանուր և քաղաքացիական իրավունքում տարբերակվում է լիզինգի երկու տեսակ. անշարժ գույքի և անձնական գույքի: Լիզինգի պայմանագրով լիզինգատուն պարտավորվում է պայմանագրում նշված ժամկետով լիզինգառուին տրամադրել պայմանագրում նշված ակտիվի օգտագործման իրավունքը: Ակտիվից ստացվող տնտեսական օգուտները ստանում է լիզինգառուն, իսկ ժամկետի վերջում կարող է փոխանցվել նաև ակտիվի սեփականության իրավունքը: Լիզինգային պայմանագրի ուսումնասիրումը կապված է դրա հետ կապված ռիսկերի հետ: Լիզինգի կնքումից հետո լիզինգառուին անցնում է ակտիվի եկամտաբերության հետ կապված ռիսկերը, իսկ շուկայական ռիսկը մնում է լիզինգատուին: Այս պայմանագրի հետ կապված երկու կողմերի մոտ էլ առաջանում է օպորտունիստական վարքագծի հնարավորություն և հատկապես նշանակալից են հետգործարքային ռիսկերը: Օրինակ՝ լիզինգատուն կարող է բարձրացնել վճարը, լիզինգառուն կարող է անբարեխիղճ օգտագործել գույքը: Կայուն գործնական հարաբերությունների ապահովումը այս ոլորտում մեծապես կախված է ինստիտուցիոնալ միջավայրից:

**Աշխատանքային պայմանագիրը:** Ըստ քաղաքացիական իրավունքի ծառայության մատուցման պայմանագրով կողմերից մեկը պարտավորվում է մատուցել խոստացված ծառայությունը, մյուսը տալ խոստացված փոխհատուցումը (German Civil Code, Art. 611, sec. 1): Աշխատանքային պայմանագրի բնույթը առանձնահատուկ է նրանով, որ, նախ գործ ունի մարդկանց հետ, ինչպես նաև պարունակում է ցուցումներ գործատուի կողմից, որով գործատուն իրավունք է ստանում կառավարել և ուղղորդել աշխատակցին (Black 1990, 525): Մինչգործարքային օպորտունիզմի օրինակ է այն, որ աշխատակիցը առավել լավ գիտի սեփական հնարավորությունները, քան գործատուն: Այս դեպքում առաջացող խնդիրներից է ինչպես բարոյական վնասը, այնպես էլ **սխալ ընտրությունը (adverse selection):** Գործարքի երկու կողմերն էլ սովորաբար շահագրգռված են, որ այն արդյունավետ կերպով իրականացվի: Սակայն գործարքի կողմերից մեկը սովորաբար առավել շատ սպեցիֆիկ ներդրումներ է կատարում, քան մյուսը, *հետևաբար գործարքի ձախողումից կողմերի բարեկեցության կորուստը ասիմետրիկ է լինում:*



**Վարկային պայմանագիրը:** Վարկային պայմանագրով վարկատուն պարտավորվում է վարկառուին տրամադրել նշված գումարը, վերջինս էլ պարտավորվում է վերադարձնել գումարը տոկոսադրույքի հետ միասին պայմանագրում նշված ժամկետում: Ընդհանուր իրավունքը չի տալիս վարկի իրավաբանական սահմանում: Վարկի տարբերությունը մյուս պայմանագրերի առարկայից կայանում է նրանում, որ այն առավել «առածգական» է օգտագործման առումով, այսինքն վարկը ստանալուց հետո վարկառուն կարող է տարբեր/ ոչ արտադրողական, ոչ նպատակային/ նպատակներով այն օգտագործել, ինչը մեծացնում է **վերադարձելիության ռիսկը**, հետևաբար **հեփգործարքային օպորտունիզմը**: Բացի այդ վարկառուն առավել լավ գիտի իր տնտեսական հնարավորությունները: Այս ոլորտի ինստիտուցիոնալ բարելավումներից մեկը միջնորդ կազմակերպությունների զարգացումն է, սակայն առավել քան կարևոր է ոչ ֆորմալ ինստիտուցիոնալ միջավայրը:


Ամփոփելով վերոնշյալը կարող ենք եզրակացնել, որ.

- ▶ գործարքի կնքումից առաջ և հետո կարող են առաջանալ խնդիրներ, որոնք **տեղեկատվական ասիմետրիայի** հետևանք են,
- ▶ տեղեկատվական ասիմետրիան մղում է գործարքի կողմերից մեկին դրսևորել **օպորտունիստական վարքագիծ**, ինչի արդյունքում առաջանում է **բարոյական վնասի/կնքումից հետո/ և սխալ ընտրության/կնքումից առաջ/ խնդիր**:
- ▶ Երկու դեպքում էլ **վարքագծի կարգավորումը հնարավոր չէ** իրականացնել նորդասական տեսության առաջարկած **գնային մեխանիզմով**, ինչի արդյունքում տեղի է ունենում **շուկայի ձախողում և գործարքի ձախողում**:
- ▶ Գործարքի կողմերը կատարում են գործարքի սպեցիֆիկ ներդրումներ և գործարքը կնքելուց հետո հայտնվում «փակուղում» (**“locked in” effect**), ինչը ծախսատար է դարձնում գործարքից դուրս գալը:

Այս խնդիրների լուծումը մեծապես կապված է տնտեսությունում գործող ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուցիոնալ միջավայրի հետ: Մրցակցային շուկայական տնտեսությունում պետք է իրականացնել համակարգված միջոցառումներ,

որպեսզի ձևավորվի պայմանագրային և ինստիտուցիոնալ այնպիսի միջավայր, որը թույլ կտա.

1. Կանխել ռեսուրսների վատնումը,
2. Ապահովել արտադրության և սպառման համաձայնեցում,
3. Խթանել նորարարությունը:



**Գծապատկեր 4: Ուիլիամսոնի սխեման[4,28]**

ՆԻՏ - ը ուսումնասիրում է անհատների միջև փոխադարձ համաձայնությամբ և տրասակցիոն ծախսերի պայմաններում տնտեսական գործարքների կորդինացման հարցը: Ըստ Նորտի և Դեվիսի ինստիտուցիոնալ համաձայնությունները տնտեսվարող միավորների միջև պայմանավորվածություններ են, որոնցով որոշվում են մրցակցության և համագործակցության ձևերը: Ինստիտուցիոնալ միջավայրը սոցիալական, քաղաքական և իրավական կանոնների ամբողջությունն է, որով որոշվում են ինստիտուցիոնալ համաձայնությունների կնքման շրջանակները: Ուիլամսոնի սխեման պատկերավոր ներկայացնում է սոցիալապես պաշտպանված կանոնների հիերարխիկ բնույթը[4,27]:

## **1.2. Ինստիտուտների ազդեցությունը տնտեսական զարգացման վրա:**

Դասական դպրոցի ներկայացուցիչները տնտեսական աճի աղբյուր էին համարում խնայողությունները և կապիտալի կուտակումը: Մեծ դեպրեսիայից հետո առաջ քաշվեց այն գաղափարը, որ կապիտալի կուտակումը անհրաժեշտ է, բայց ոչ բավարար տնտեսական առաջընթացի համար: Տնտեսական աճի աղբյուրների էմպիրիկ հետազոտությունները, որոնք կիրառում են ստանդարտ արտադրական ֆունկցիաներ, չեն հաստատում «ֆիզիկական կապիտալի» որոշիչ դերը[23,1]: Դենիսոնը, ով առաջինն է առաջարկել տնտեսական աճի հաշվարկման մեթոդներ, իր հաշվարկներում պարզել է, որ ԱՄՆ մեկ զբաղվածի հաշվով ազգային եկամտի աճի առավելագույնը 20% - ը կարելի է վերագրել իրական կապիտալի կուտակմանը: Մնացած մասը բաժին է ընկնում մնացորդին, որը ներառում է ինչպես տեխնիկական առաջընթացը, այնպես էլ կառավարման և կազմակերպման վերաբերյալ մեր ունեցած գիտելիքները: Այսպես տնտեսական աճի հետազոտման ոլորտ ներթափանցում են նաև սոցիալ – տնտեսական հարաբերությունները[23,2]: Երկրների միջև այս հարաբերությունների տարբերությունները բացահայտելու համար հեղինակների կողմից դիտարկվող հիմնարար գործոններն են.

- ✓ ինստիտուտները՝ մարդկանց կողմից ստեղծվող և տնտեսական խթանների վրա ազդող գործոնները,
- ✓ աշխարհագրությունը՝ միջավայրի էկզոգեն տարբերությունները,
- ✓ մշակույթը՝ տարբերությունները հավատալիքների, վերաբերմունքի և նախընտրությունների միջև (Robbins, 8):





Պատմական փաստերի վրա հիմնված ժամանակակից հետազոտությունները ցույց են տալիս, որ այս գործոններից ամենաազդեցիկը ինստիտուտներն են (Acemoglu ,1): Մյուս գործոնները տնտեսվարման վրա ազդում են ավելի շուտ

ինստիտուտների ձևավորման վրա ազդելու միջոցով: Երկրների տնտեսական հաջողությունների տարբերությունների պատճառը ինստիտուտների, տնտեսության աշխատանքը կարգավորող կանոնների, մարդկանց մոտիվացնող խթանների տարբերություններն են: «Ինստիտուտները հասարակությունում խաղի կանոններն են, առավել ֆորմալ, մարդկանց ստեղծած սահմանափակումներն են, որոնք ձևավորում են մարդկանց փոխհարաբերությունները» (North, 1990,3): Այս սահմանումը արտացոլում է ինստիտուտների երեք կարևոր բնութագրիչ. (1) ստեղծված են մարդկանց կողմից, ինչը բացառում է այլ կերպ ձևավորվելու պատճառները, օր.՝ աշխարհագրական, (2) խաղի կանոններ են, որոնք սահմանափակում են մարդկանց վարքագիծը, (3) դրանց հիմնական ազդեցությունը դրսևորվում է **խթանների** միջոցով (North 1981): Ըստ Աճեմոնովու ինստիտուտները երեք փոխկապակցված հասկացությունների ամբողջությունն են՝

- ▶ *տնտեսական ինստիտուտներ*, որոնք ներառում են հասարակություններում խթանների կառուցվածքը և ռեսուրսների բաշխումը որոշող գործոնները,
- ▶ *քաղաքական ուժ*: Տնտեսական ինստիտուտները հասարակության կոլեկտիվ գործողությունների արդյունքն են: Հասարակությունը բաղկացած է հակասող շահերով խմբերից: Այս խմբերի հարաբերական քաղաքական ուժը թույլ է տալիս կառավարել ռեսուրսների բաշխումը և իրականացնել քաղաքականություններ: Քաղաքական ուժի բաշխումից է կախված տնտեսական ինստիտուտների որակը: Քաղաքական ուժը լինում է փաստացի և օրինական:
- ▶ *քաղաքական ինստիտուտներ* - ներառում են հասարակության խմբերի միջև օրինական քաղաքական ուժը բաշխող ինստիտուտները: Քաղաքական ինստիտուտները և քաղաքական ուժի բաշխումը որոշվում են ռեսուրսների բաշխմամբ: Տնտեսության արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է ունենալ նաև զարգացած ենթակառուցվածքներ, որոնք բացի շուկայական մեխանիզմներով ապահովումից պետական միջամտության պահանջ են առաջացնում[28,2]: ՆԻՏ ներկայացուցիչները պետության գործառույթներն են համարում տրանսակցիոն ծախսերը կրճատող և կամավոր փոխանակման համար

բարենպաստ պայմաններ ստեղծող կանոնների և ինստիտուտների ստեղծումը և պահպանումը: ՆԻՏ գաղափարախոսությունում պետության պայմանագրային տեսությունն է ընկած, ըստ որի քաղաքացիները պետությանն են լիազորում պահպանել հասարակական կարգը: Սակայն պրակտիկայում առավել հաճախ հանդիպում է պետության արդյունահանող տեսությանը բնորոշ իրավիճակ, ըստ որի պետությունը գործիք է, որով հասարակության առավել ազդեցիկ շերտը եկամուտները վերաբաշխում է հոգուտ իրեն:


Ըստ Աճեմոլլու տնտեսական աճի հիմքում ընկած են **ներառական** տնտեսական ինստիտուտները, որոնք բնութագրվում են ապահով սեփականության իրավունքներով, օրենքի և կարգուկանոնի գերակայությամբ, շուկաների պետական պաշտպանությամբ, գործարարության համար բաց մուտքով, պայմանագրերի բարեխիղճ կատարմամբ, կրթության հասանելիությամբ և քաղաքացիների մեծամասնության համար հասանելի հնարավորություններով, այսինքն ինստիտուտներ, որոնք խթաններ են ստեղծում ներդրումների և նորարարության համար: Տնտեսական ինստիտուտները գործում են **քաղաքական ինստիտուտների** ուղեկցությամբ, որոնք ևս կարող են լինել արդյունահանող կամ ներառական: Արդյունահանող քաղաքական ինստիտուտները բնորոշվում են բացարձակ իշխանությամբ, ներառականները՝ պլյուրալիզմով:

		Տնտեսական ինստիտուտներ	
		Ներառական	Արդյունահանող
Քաղաքական ինստիտուտներ	Ներառական		
	Արդյունահանող		

**Գծապատկեր 5: Ինստիտուտների գոյարևման սցենարները, Աճեմոլլու [15]**

Ներառական տնտեսական ինստիտուտները խթանում են նաև կրթության և տեխնոլոգիաների զարգացումը, որոնք բարեկեցության աճի հզորագույն խթաններն են: Կայուն տնտեսական աճը գրեթե միշտ ուղեկցվում է տեխնոլոգիական բարելավումներով, ինչը բարձրացնում է արտադրական

գործոնների արտադրողականությունը: Ներառական տնտեսական ինստիտուտները ոչ ապահովում և ոչ էլ ապահովվում են արդյունահանող քաղաքական ինստիտուտների կողմից: Ազգերը ձախողում են, երբ համադրում են արդյունահանող տնտեսական և քաղաքական ինստիտուտները և հաջողության հասնում ներառական ինստիտուտների համադրմամբ: Համադրման այս երկու տարբերակները ինքնավերարտադրվում են: Ձախողման հիմքում ընկած ինստիտուտների պահպանման հիմնական պատճառը երկրում քաղաքական ուժի և եկամուտների հնարավոր վերաբաշխումներն են: Հասարակության այն հատվածները, որոնք տուժելու են վերաբաշխումների արդյունքում ջանք են գործադրում, որպեսզի կանխեն ներառական ինստիտուտների ձևավորումը:



**Գծապատկեր 6: Ինստիտուտների զարգացման հերթագիծը, Աճեմողլու [15]**

1970 – ականներին Նորտը և Թոմասը նշեցին, որ կապիտալի կուտակումը չի համարվում տնտեսական աճի աղբյուր, դա հենց տնտեսական աճն է: Ըստ Ուիլիամսոնի հասարակական կյանքի առավել խորը շերտերում ձևավորվում է քաղաքատնտեսական կառուցվածքը, որով էլ որոշվում է հասարակության անդամների վարքի կանոնները: Այսպես ակադեմիական գրականությունում հասունանում է այն միտքը, որ ինստիտուցիոնալ կառուցվածքները, իսկ դրանց մեջ առաջին հերթին սեփականության իրավունքները և գործարքների կնքման համակարգով սահմանվող իրավունքներն ու պարտականությունները երկարաժամկետ զարգացման և տնտեսական աճի առավել խորը աղբյուր են հանդիսանում: Ժամանակակից էմպիրիկ հետազոտություններում բացահայտվում է նաև, որ առավել զարգացած ինստիտուտներով տնտեսությունները առավել կայուն են մնում արտաքին շոկերի պայմաններում: Ռոդրիկը ցույց է տվել այս կապը

նավթային ճգնաժամը հաղթահարած երկրների օրինակով: «Ինստիտուտները գլխավորում են» հետազոտությունում նույն հեղինակի կողմից ցույց է տրվում, որ աճի երկարաժամկետ տեմպերի միջև տարբերությունները առավել լավ բացատրվում են սեփականության իրավունքների պաշտպանվածության և դատական համակարգի որակով, քան այլ ֆունդամենտալ գործոններով[3,9]: Ընտրանքում 1 ստանդարտ շեղումով ինստիտուտների որակի բարելավումը բերում է երկրների միջև 1 շնչի հաշվով եկամտի ավելացման 6,4 անգամ, ինչը Բոլիվիայի և Հվ Կորեայի տվյալների միջև փաստացի տարբերությունն է: Ներդրումները հանդիսանում են ՀՆԱ և ինստիտուցիոնալ միջավայրի միջև կապող օղակ և մի շարք հետազոտություններում ցույց է տրվում հակադարձ կապը ՀՆԱ – ում ներդրումների մասնաբաժնի և սեփականության իրավունքները բնութագրող ցուցանիշների միջև: Նմանատիպ եզրահանգման են եկել նաև այլ հեղինակներ: [Acemoglu, Johnson, Robinson, Thaicharoen (2003)], Easterly, Ritzan, Woolcock (2006): Սակայն կարևոր է նշել, որ ինստիտուցիոնալ գործոնները առավել ազդեցիկ են ե/ժ տնտեսական աճի տեմպի վրա և կարճաժամկետ աճի տարբերությունների մեկնաբանությունը ինստիտուցիոնալ փոփոխականներով վիճակագրորեն թույլ նշանակալի և անկայուն արդյունքների են հանգեցնում [11]: Այս արդյունքները համապատասխանում են առանձին երկրների տնտեսական աճի տեմպերի արագացման ուսումնասիրումից ստացվող արդյունքներին՝ արագացման համար երբեմն բավարար է այլ՝ ոչ ֆունդամենտալ տնտեսական սահմանափակումների թուլացումը: Այսպիսի բարեհաջող աճի օրինակներ են Չինաստանի և Հնդկաստանի օրինակները, որոնք ինստիտուցիոնալ բարեփոխումները սկսեցին իրականացնել արդեն իսկ սկսված բարձր տնտեսական աճի պայմաններում[11]:

Ինստիտուտների ազդեցությունը ուսումնասիրող գրականությունում առավել մեծ տեղ է հատկացվում իրավական համակարգի որակի և ֆինանսական համակարգի զարգացվածության աստիճանին: Ըստ որոշ հեղինակների անգլոամերիկյան իրավունքով առաջնորդվող երկրներում սեփականության իրավունքերը առավել արդյունավետ են պաշտպանվում, ինչն էլ համապատասխան

ազդեցությունն է ունենում ֆինանսական շուկաների, մասնավոր ներդրումների և տնտեսական աճի դինամիկայի վրա [11]: *Beck, Demirguc-Kunt, Levine, Maksimovic* ցույց են տվել, որ իրավական համակարգի տիպը տնտեսական աճի վրա ազդում է ֆինանսական շուկաների զարգացվածության միջոցով: Այս հետազոտությունը շարունակությունն է առավել վաղ կատարված աշխատանքի, որում 80 երկրների օրինակով ցույց է տրվել կապը ֆինանսական շուկայի խորության և ե/ժ տնտեսական աճի, հիմնական կապիտալի կուտակման, ներդրումների արդյունավետ օգտագործման միջև: Բացի այդ ֆինանսական համակարգի զարգացվածությունը բնութագրող ցուցանիշները կոռելացված են տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշների հետ: Հեղինակների կարծիքով, սա արտացոլում է Շումպետերի միտքը այն մասին, որ ֆինանսական համակարգը առանցքային դեր է խաղում նոր ձեռնարկությունների հեռանկարայնության և դրանց միջև ֆինանսական միջոցների վերաբաշխման հարցում: Ֆինանսական համակարգի զարգացվածությունը նաև ազդում է օտարերկրյա ներդրումների արդյունավետ օգտագործման վրա [11]: Այս փաստը օգնում է հասկանալ, թե ինչու է զարգացող երկրներում բացակայում վիճակագրական կապը օտարերկրյա ներդրումների և տնտեսական աճի միջև: Բացի այդ, ֆինանսական շուկաների զարգացումը դրական ազդեցություն է թողնում մրցակցության վրա: Ցույց է տրվում, որ արտաքին ֆինանսավորման հասանելիությունը նպաստում է տվյալ սեկտորում ֆիրմաների թվի աճին [11]: Մեկ այլ հետազոտություններում ցույց է տրվում կապը առավել տարրական՝ անձի և անձնական գույքի անձեռնմխելիությունը ապահովող իրավական ինստիտուտների և տնտեսական աճի միջև կապը: Այս ինստիտուտները հանդիսանում են մյուս ինստիտուտների կառուցման հիմքը և սրանց թույլ զարգացվածությունը էապես ազդում է առավել բարդ ինստիտուտների որակի վրա: Այս փաստի էմպիրիկ ապացույցը տրվել է 90 – ականների 2 – ըրդ Մաուի, Յանովսկու կողմից կեսին ՌԴ տարբեր տարածաշրջաններում տնտեսական աճի ցուցանիշների հիման վրա [11]. *Roll, Talbott* –ը իրենց մոդելում դիտարկել են կապը ե/ժ տնտեսական աճի,



քաղաքական և տնտեսական ինստիտուտների և տնտեսական քաղաքականության միջոցառումների միջև:

**Ինստիտուցիոնալ միջավայրի փոփոխության հիմնախնդիրները անցումային տնտեսություններում:** Ըստ նորինստիտուցիոնալիստների պատմության ընթացքում գոյատևում են այն ինստիտուտները, որոնք մինիմալացնում են տրանսակցիոն ծախսերը, նպաստում աշխատանքի բաժանմանը և տնտեսական գործարքների ինտենսիվացմանը: Իսկ այսպիսի ինստիտուտները հենց շուկայական տնտեսությունում գործող ինստիտուտներն են (3,211): Անցումային փուլում շուկայական տնտեսության ձևավորման կարևորագույն քայլը առաջին հերթին ֆորմալ ինստիտուտների ներդրումն է: Առաջին քայլը տնտեսական գործունեությունը բնութագրող օրենսդրության ընդունումն է: Սակայն օրենսդրության առկայությունը ոչ միշտ է ուղեկցվում դրա արդյունավետ կիրառմամբ՝ արդյունավետություն երկրի արտադրական հնարավորությունների սահմանին հասնելու իմաստով: Անցումային տնտեսություններում հաճախ արդյունավետ ֆորմալ ինստիտուտների ներդրումը ուղեկցվում է տնտեսական համակարգի արդյունավետության անկմամբ: Պարադոքսի բացատրության հիմքում ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների *կոնֆլիկտն* է: Ներկայումս ընդունվում է այն փաստը, որ վերափոխումների սկզբնական շրջանում թերագնահատվել է ինստիտուցիոնալ գործոնների դերը և ավելի շատ ուշադրություն է դարձվել ազատականացման, կայունացման և մասնավորեցման հարցերին: (World Bank, 2002). Համաշխարհային բանկի զեկույցում նշվում է, որ տնտեսական քաղաքականության տեսանկյունից ազդեցիկ են 2 խումբ ինստիտուցիոնալ վերափոխումներ: Առաջինը ներդրումային միջավայրի բարելավումն է (սեփականության իրավունքների պաշտպանություն, կարգավորման մեխանիզմների և գործընթացների պարզեցում, մրցակցային միջավայրի ապահովում), որը խթանում է նոր ձեռնարկությունների մուտքը շուկա: Երկրորդը կորպորատիվ կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված օրենսդրական և կարգավորող փոփոխություններն են:

Ի տարբերություն ֆորմալ ինստիտուտների, ոչ ֆորմալ ինստիտուտների փոփոխությունը երկարատև գործընթաց է: Ոչ ֆորմալ հարաբերությունների հիման վրա կատարվող անցումը ստեղծում է «ինստիտուցիոնալ ծուղակ»: Ստեղծվում են ոչ ֆորմալ ինստիտուտներ հատկապես գործարար ակտիվության վրա ազդող պայմանագրերի ապահովում, սեփականության գրանցում, ընկերության հիմնում, հարկում դաշտերում: Ձևավորված ոչ ֆորմալ ինստիտուտները նվազեցնում են բնակչության որոշակի խավի տրանսակցիոն ծախսերը և ստեղծում նպաստավոր պայմաններ նրանց գործունեության համար: Որպես արդյունք՝ չկայացած ֆորմալ ինստիտուտները «կայունանում են» և ոչ ֆորմալ ինստիտուտների հետ համատեղ ծառայում վերոնշյալ խմբի տնտեսական և քաղաքական շահերին: Ինստիտուցիոնալ ծուղակում հայտնվում են հատկապես բնական ռեսուրսներով հարուստ երկրները, որոնցում հումքից ստացվող բարձր ռենտան կանխում է ինստիտուցիոնալ միջավայրի հետագա բարելավումը [Benson I.N.,2016]: Այս ծուղակի արդյունքում առաջացող մեծագույն խնդիրներն են սովերային տնտեսությունը, հարկերից խուսափումը[3]: Անցումային տնտեսություններում սովերային տնտեսության մասնաբաժինը հակադարձ կապի մեջ է պետական եկամուտների հետ: Պետական եկամուտների մակարդակը տնտեսությունում ճշգրտորեն արտացոլում է պետության կողմից օրենքների պահպանման և հարկադրման կարողությունը: Գոյություն ունի նաև հակադարձ կապ անցումային շրջանում արտադրողականության և ՀՆԱ -ում պետական ծախսերի կրճատման միջև: Առավել նեղ կապ է առկա ներդրումների դինամիկայի և պետեկամուտների միջև: Այսպես, պետական ծախսերի կրճատումը հանգեցնում է ինստիտուտների քայքայման, ինչն էլ բացասաբար է ազդում տնտեսական ակտիվության և ներդրումների վրա[6]:

## **ԳԼՈՒԽ 2: ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՉԱՓՈՒՄԸ**

### **2.1. Ինստիտուտների դասակարգումը**

Ինստիտուտները պայմանականորեն կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

**Իրավական ինստիտուտները** դատական, օրենսդրական և ադմինիստրատիվ համակարգի ինստիտուտներն են, որոնց նպատակն է ապահովել անհատի և մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը: Չարգացած իրավական ինստիտուտներով երկրներին բնորոշ են դատական համակարգի անկախությունը, ադմինիստրատիվ համակարգի գործունեության թափանցիկությունը և պետական կառույցներում կոռուպցիայի բացակայությունը: Իրավական ինստիտուտների որակը ազդում է ներդրումային միջավայրի վրա: Այս ինստիտուտների չափման ցուցանիշներից են հանդիսանում հետևյալ ինդեքսների իրավական բաղադրիչները. *Fraser Institute's Economic Freedom of the World, Transparency International's Corruptions Perceptions Index, Heritage Foundation's Index of Economic Freedom, PRSG's (Political Risk Services Group) International Country Risk Guide, World Economic Forum's Growth Competitiveness Index, World Bank Worldwide Governance Indicators (Governance Matters)[11,37]:*

**Կարգավորող ինստիտուտները** ձեռնարկությունների ամենօրյա գործունեությունը վերահսկող և կարգավորող, ինչպես նաև ընկերությունների գործունեությունը դադարեցնելու իրավունք ունեցող պետական և մասնավոր մարմիններն են: Կարգավորող ինստիտուտների թվին են դասվում այն պետական մարմինները, որոնցից կախված է բիզնեսի բացման, ընդլայնման, լուծարման պարզությունը և արագությունը, ներառյալ այն մարմինները, որոնք ապահովում են ձեռնարկատերերի հասանելիությունը ենթակառուցվածքներին, հողին և շանարարական թույլտվություններին: **Երկրորդ խումբ** կարգավորող ինստիտուտները տնտեսվարման ընդհանուր կանոնների պահպանումը վերահսկող մարմիններն են, ներառյալ արտաքին առևտրի, լիցենզավորման և սերտիֆիկացման, հարկային կանոնների, սանիտարահամաճարակային, տեխնիկական անվտանգության կանոնները: **Երրորդ խումբ** կարգավորող օրգաններն են հակամենաշնորհային և մրցակցությունը ապահովող մարմինները: Այս մարմինների գործունեության արդյունավետությունը ազդում է

մասնավոր սեկտորում գործառնությունների եկամտաբերության և ներդրումային գրավչության վրա: Կարգավորող ինստիտուտների որակի գնահատումը իրականացվում է ձեռնարկությունների շրջանում հարցումների միջոցով (World bank, Doing business), որոշ չափով այս ինստիտուտների որակը արտահայտվում է EBRD's Transition Indicators, ինչպես նաև վերոնշյալ ինդեքսների միջոցով[11,37]:

**Մարդկային կապիտալի զարգացման ինստիտուտները** ներառում են առողջապահության, կրթության, սոցիալական ապահովության ոլորտի ինստիտուտները: Այս ինստիտուտների որակը արտացոլող ցուցանիշներից են՝ UN's Human Development Indicators, OECD's PISA, World Bank's Knowledge Economy Index: Մարդկային կապիտալի կարևոր լրացուցիչ բնութագրիչներից է «սոցիալական կապիտալ» հասկացությունը, որը բնութագրում է հասարակությունում փոխադարձ վստահության աստիճանը և շահավիղը: Վստահության բարձր մակարդակը նպաստում է հասարակության տնտեսական զարգացմանը և առաջխաղացմանը: Տարբեր երկրներում սոցիալական կապիտալի դինամիկայի մասին տվյալներ են տալիս World values survey - ի միջոցով իրականացված հետազոտությունները[11,38]:

**Տնտեսական կորորդինացման և ռիսկերի բաշխման ինստիտուտները** ներառում են միջնորդ կազմակերպությունները, ֆոնդային շուկա, կենսաթոշակային ֆոնդերը: Դրանց արդյունավետ գործունեությունը նպաստում է ֆինանսական ռեսուրսների կենտրոնացմանը, փոքր և միջին ներդրողների գործունեության կորորդինացմանը և այլն: Ռիսկերի կորորդինացման և բաշխման ինստիտուտների թվին են դասվում ապահովագրական ընկերությունները և պետական ապահովագրական մարմինները, ներդրումային ֆոնդերը, պետական և մասնավոր վենչուրային ընկերությունները[11,39]:

## **2.2. Ինստիտուցիոնալ միջավայրը չափող ցուցանիշների դասակարգումը**

Գրականությունում առաջարկվում է ինստիտուցիոնալ բնութագրիչների չափման հետևյալ մոտեցումները.

- ✓ Մակրոտնտեսական ցուցանիշների վրա հիմնված, որը հիմնականում կիրառվում է ֆինանսական սեկտորի զարգացվածության գանհատման նպատակով,
- ✓ Բնակչության և ձեռնարկությունների շրջանում անցկացվող հարցումներ,
- ✓ Փորձագետների շրջանում անցկացվող հարցումներ,
- ✓ Որոշակի որակական բնութագրիչների ուղղակի ստուգում, օրինակ՝ կրթության որակը թեստերի միջոցով, ընտրությունները՝ ձայների վիճակագրության միջոցով և այլն:

Մեծ թվով երկրների համար ինստիտուտների չափման երկու հիմնական տիպի ցուցանիշներ են առկա՝ **գնահատող** ցուցանիշներ և **նկարագրող** ցուցանիշներ: **Կատարողականի** ցուցանիշները ցույց են տալիս կառավարման որակը: Օրինակ՝ երկրները դասակարգվում են ըստ կոռուպցիայի մակարդակի, իրականացվող քաղաքականության կանխատեսելիության: **Գործընթացային** ցուցանիշները արտահայտում են ինստիտուցիոնալ «մուտքերը», որոնցով էլ ստեղծվում է կառավարման արդյունքը: Գործընթացային ցուցանիշի օրինակ է պետական ծառայողների միջին աշխատավարձի մեծության տարբերությունը մասնավոր սեկտորի աշխատավարձերից:

Կատարողականի ամենատարածված ցուցանիշները և դրանցում արտացոլվող ցուցանիշները ներկայացված են ստորև: Ցուցանիշների նկարագրությունը իրականացվել է ԵԱՏՄ, Մերձբալթյան երկրների, Թուրքիա, Վրաստան, Ադրբեջանի օրինակով:


**1. The World Bank Worldwide Governance Indicators, KKZ): Պեղական կառավարման որակի ցուցանիշներ:** Հետազոտական նախագիծ է, որը ներառում է 212 երկիր և տարածաշրջան: Տվյալները վերցվում են 35 աղբյուրից, որոնք ապահովում են 33 կազմակերպություն: Տվյալները արտացոլում են պետական, մասնավոր սեկտորների, ոչ պետական կազմակերպությունների փորձագետների՝ կառավարման որակի վերաբերյալ ընկալումները: Հեղինակները բացահայտ նշում են նաև յուրաքանչյուր երկրի համար սխալի մեծությունը:


Հետազոտողները սահմանում են կառավարումը որպես՝ «**երկրում իշխանությունը վարելու ավանդույթները և ինստիտուտները**»: Սա ներառում է.

ա) **կառավարությունների ընտրության, մոնիտորինգի գործընթացը**, որոնք արտացոլում են քաղաքացիների իրավունքներ և պետական մարմինների հաշվետվողականություն (*Voice and accountability*), քաղաքական համակարգի կայունություն և բռնության բացակայություն (*Political stability and absence of violence/terrorism*) ցուցանիշներում:

Առաջին ցուցանիշի դեպքում ընտրված երկրների շարքում առաջատար է Վրաստանը, ՀՀ -ում իրավիճակը առավելապես նման է ՌԴ և Ղրղզստանին և հարևան երկրների շարքում չի գիջում միայն Ադրբեջանին:

2016 թվականի փաստացի տվյալներից ակնհայտ է, որ Մերձբալթյան երկրները գերազանցում են մնացած հետխորհրդային պետությունների ցուցանիշները, իսկ ԵԱՏՄ երկրների շարքում ՀՀ -ն 3-րդն է՝ Մոլդովայից և Ուկրաինայից հետո:






**Գծապատկեր 1: Voice and accountability 1996-2016, 2016**

**Աղբյուր՝ <http://info.worldbank.org/governance/WGI/#reports>**

Քաղաքական կայունության տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում երկարաժամկետ թրենդով առաջտարներն են Բելառուսը և Ղազախստանը: Հետխորհրդային երկրների շարքում կրկին Մերձբալթյան երկրները և Վրաստանը առաջատար դիրքերում են, մասնավորապես դա արտացոլվում է 2016 թվականի տվյալներով:



Պճապարկեր 2 : Political stability and absence of violence/ terrorism) ,1996-2016




Պճապարկեր 3 : Political stability and absence of violence/ terrorism) , 2016


Աղբյուր՝ <http://info.worldbank.org/governance/WGI/#reports>

բ) կառավարության հնարավորությունները արդյունավետ մշակել և իրականացնել քաղաքականությունները, որոնք արտացոլվում են պետական կառավարման մարմինների արդյունավետություն (Government effectiveness), կարգավորող ինստիտուտների որակ (Regulatory quality) ցուցանիշներում: Ընտրված երկրների շարքում երկարաժամկետ հատվածում առաջատարներն են Վրաստանը և Թուրքիան, ԵԱՏՄ երկրների շարքում առաջատար է ՀՀ-ն, միայն 2014 թվականից հետո զիջում է Ղազախստանին:






**Պճապարկեր 4: Government effectiveness 1996-2016**




**Պճապարկեր 5: Government effectiveness, 2016**

Աղբյուր՝ <http://info.worldbank.org/governance/WGI/#reports>

Կարգավորման որակի տեսանկյունից կրկին հարևան երկրների շարքում առաջատարը Վրաստանն է, << - ն զիջում է նաև Թուրքիային, իսկ ԵԱՏՄ երկրների շարքում առաջատար դիրքերում է:




Պճապարկեր 6: Regulatory quality , 1996-2016




Պճապարկեր 7: Regulatory quality , 2016

Աղբյուր՝ <http://info.worldbank.org/governance/WGI/#reports>

գ) **փնտրեսական և սոցիալական հարաբերությունները կառավարող ինստիտուտների նկատմամբ քաղաքացիների և պետության վերաբերմունքը**, որոնք արտացոլվում են իրավական ինստիտուտների որակ (Rule of law), հակակոռուպցիոն վերահսկողություն (Control of corruption) ցուցանիշներում:




**Գծապատկեր 8: Rule of law, 1996-2016**




**Գծապատկեր 9: Rule of law, 2016**

Աղբյուր՝ <http://info.worldbank.org/governance/WGI/#reports>

Ամփոփելով WGI ցուցանիշները, կարող ենք եզրակացնել, որ անցումային շրջանում առավել բարեհաջող ինստիտուցիոնալ փոփոխություններ իրականացվել են Մերձբալթյան երկրներում: ԵԱՏՄ կազմի մեջ մտնող երկրների շարքում երկարաժամկետ հատվածում ՀՀ - ն էապես առաջատար դիրքերում է, իսկ հարևան երկրների շարքում առաջատարը Վրաստանն է, որը առաջատար է նաև հետխորհրդային երկրների շարքում: Ցուցանիշներով զիջում է միայն Մերձբալթյան երկրներին: Գծապատկերներում նաև ակնհայտ երևում է Վրաստանի ցուցանիշների շեշտակի և կայուն աճող թրենդը 1996- 2016 թվականներին:



**Գծապատկեր 10: Control of corruption, 1996-2016**



**Գծապատկեր 11: Control of corruption, 2016**

Աղբյուր՝ <http://info.worldbank.org/governance/WGI/#reports>

Կիրառելով այս ցուցանիշները երկրների ընտրանքը բաժանվել է կլաստերների երկքայլ կլաստերային վերլուծության եղանակով: ՀՀ – ն պատկանում է իր հարևան և ԵԱՏՄ երկրների կլաստերին: Վրաստանը 2 – րդ կլաստերում է: Կլաստերների տրոհման համար ըստ կարևորության նվազման հետևյալ գործոններն են հիմք հանդիսացել. հաշվետվողականություն, կոռուպցիա, օրենքի գերակայություն, կառավարման արդյունավետություն, կարգավորման որակ, քաղաքական կայունություն:

**Կլաստեր 1:** Բելառուս, Իրան, Ադրբեջան, Ղազախստան, Տաջիկստան, ՌԴ, Ղրղզստան, ՀՀ, Մոլդովա, Ուկրաինա, Թուրքիա:

**Կլաստեր 2:** Վրաստան, Սերբիա, Ռումինիա, Խորվաթիա, Իսրայել, Լատվիա, Լիտվա, Չեխիա, Սլովակիա, Իտալիա, Կիպրոս, Ֆրանսիա, Սլովենիա:


**Կլաստեր 3:** Էստոնիա, Բելգիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Իռլանդիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Շվեդիա, Շվեյցարիա:

ՀՀ – ն բոլոր ցուցանիշներով առավել լավ արդյունք է ցուցաբերում, քան կլաստերի միջինն է: Մյուս կողմից, միջինը շուրջ 1,7 անգամ զիջում է 2 - րդ կլաստերի միջինին: Առավել ցածր են արդյունքները կոռուպցիայի և կառավարության հաշվետվողականության ցուցանիշներով:

**Աղյուսակ 1: Երկքայլ կլաստերային վերլուծության արդյունքները**

	<i>CC</i>	<i>RLAW</i>	<i>GEF</i>	<i>VAC</i>	<i>RQ</i>	<i>PST</i>
Կլաստերի միջինը	26,78	30,54	40,59	24,57	40,29	26,37
<b>Բելառուս</b>	39,74	20,36	25,08	9,21	15,79	51,55
<b>Իրան</b>	26,83	19,80	41	<b>9.03</b>	<b>7.61</b>	<b>14.29</b>
<b>Ադրբեջան</b>	14,89	27,55	36,54	12,25	42,79	30,06
<b>Ղազախստան</b>	21,21	34,83	46,62	16,72	46,38	49,53
<b>Տաջիկստան</b>	10,78	12,81	19,07	9,63	17,57	18,86
<b>ՌԴ</b>	17,15	27,39	45,41	22,68	40,61	19,62
<b>Ղրղզստան</b>	11,96	14,11	25,96	30,20	42,52	21,23
ՀՀ	34,34	44,44	52,97	30,34	62,36	45,18
<b>Մոլդովա</b>	26,43	44,53	35,66	48,6	52,6	40,45
<b>Ուկրաինա</b>	17,16	26,38	31,62	46,03	33,4	27,3
<b>Թուրքիա</b>	59,19	57,82	65,39	41,72	64,68	14,93
2 – րդ կլաստերի միջինը	71.12	75.26	76.96	73.96	79.07	60.35
3- րդ կլաստերի միջինը	96.81	96.52	95.08	98.35	96.95	82.33

**Կոռուպցիայի ընկալման ցուցանիշ (Transparency International):** Արտահայտում է բնակչության ընկալումը՝ միջինացնելով ռեսպոնդենտների պատասխանների արդյունքը և նպատակ չունի օբյեկտիվ գնահատականներ տալ: Ռեսպոնդենտների թվում են ոչ ռեզիդենտ փորձագետները, ձեռնարկատերերը և ռեզիդենտ ձեռնարկատերերը: Ինդեքսը կառուցելիս կիրառվում են նաև այլ ցուցանիշներ: Առավել բարձր արժեքները համապատասխանում են կոռուպցիայի առավել ցածր մակարդակին: 2017 թվականի արդյունքներով կոռուպցիայի դեմ պայքարի աշխարհի լավագույն պրակտիկան գանցվել է Նոր Զելանդիայում և Դանիայում: Ընտրված երկրների շարքում կրկին առաջատար են Մերձբալթյան երկրները, հարևան երկրների շարքում ՀՀ – ն 3 – ըրդն է՝ Վրաստանից և Թուրքիայից հետո, իսկ ԵԱՏՄ երկրների շարքում զիջում է միայն Բելառուսին:




**Գծապատկեր 12: TI CPI 2017**

Աղբյուր՝ [https://www.transparency.org/news/feature/corruption\\_perceptions\\_index\\_2017](https://www.transparency.org/news/feature/corruption_perceptions_index_2017)


Աղյուսակ 2 : TI CPI հիմնական արդյունքները 2016 – 2017թթ .

Երկիր	CPI միավոր 2017	CPI միավոր 2016	փոփոխությունը 2016-2017	CPI դիրքը 2017	CPI դիրքը 2016	դիրքի փոփոխությունը 2016-2017
Belarus	44	40	↑ 4	68	79	↑ 11
Armenia	35	33	↑ 2	107	113	↑ 6
Kazakhstan	31	29	↑ 2	122	131	↑ 9
Estonia	71	70	↑ 1	21	22	↑ 1
Latvia	58	57	↑ 1	40	44	↑ 4
Azerbaijan	31	30	↑ 1	122	123	↑ 1
Moldova	31	30	↑ 1	122	123	↑ 1
Ukraine	30	29	↑ 1	130	131	↑ 1
Kyrgyzstan	29	28	↑ 1	135	136	↑ 1
Uzbekistan	22	21	↑ 1	157	156	↓ -1
Lithuania	59	59	→ 0	38	38	→ 0
Russia	29	29	→ 0	135	131	↓ -4
Georgia	56	57	↓ -1	46	44	↓ -2
Turkey	40	41	↓ -1	81	75	↓ -6
Tajikistan	21	25	↓ -4	161	151	↓ -10

2. **Freedom house: Ազատություն: Դեմոկրատիա:** Յուրանիշը չափում է ազատության վիճակը 195 երկրներում և 14 տարածաշրջաններում օրացուցային մեկ տարվա համար: Յուրաքանչյուր երկիր և տարածաշրջան ունի ագրեգացված միավոր [0,100] միջակայքում՝ գնահատված [0,4] սանդղակով 25 ցուցանիշի համար: Այս միավորները ցույց են տալիս երկու թվային ռեյտինգ քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատության համար՝ որտեղ ամենաազատ վիճակին համապատասխանում է 1, անազատին՝ 7 միավորը: Երկրի կամ տարածաշրջանի քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատության ռեյտինգներով երկրները դասակարգվում են որպես *ԱՂԱՏ*, *ՄԱՍՆԱԿԻ ԱՂԱՏ*, *ՈՉ ԱՂԱՏ*:



Գծապատկեր 13: Քաղաքական ազատության ռեյտինգը, 2017.




Գծապատկեր 14: Քաղաքացիական ազատության ռեյտինգը, 2017.

Աղբյուր՝ <https://freedomhouse.org/reports>

**3. Heritage foundation: Տնտեսական ազատականության ինդեքս:** Տնտեսական ազատականությունը չափվում է 12 քանակական և որակական ցուցանիշների միջոցով՝ խմբավորված տնտեսական ազատականության 4 հենասյուներում.


- ▶ Օրենքի գերակայություն - սեփականության իրավունքներ, պետության ամբողջականություն, դատական արդյունավետություն,






**Գծապատկեր 15: Տնտեսական ազատականության ինդեքս: 2018**

- ▶ Պետության չափսը - պետական ծախսեր, հարկային բեռ, ֆիսկալ առողջություն,




**Գծապատկեր 16: Տնտեսական ազատականության ինդեքս: 2018**

- ▶ Կարգավորման արդյունավետություն - բիզնեսի ազատություն, աշխատուժի ազատություն, դրամավարկային ազատություն,



**Գծապատկեր 17: Տնտեսական ազատականության ինդեքս: 2018**

- ▶ Բաց շուկաներ - առևտրի ազատություն, ներդրումների ազատություն, ֆինանսական ազատություն:




**Գծապատկեր 18: Տնտեսական ազատականության ինդեքս: 2018**

Աղբյուր՝ <https://www.heritage.org/index/explore?view=by-region-country-year>

2018 թվականին հրապարակված հաշվետվության օրակարգային խնդիրը ազատ առևտուրն է և դրա կապը բարեկեցության մակարդակի հետ: Ազատ առևտրի ցուցանիշներով ՀՀ – ն 81 – թի հորիզոնականում է 183 երկրների շարքում, առաջ լինելով Ռուսաստանից, Թուրքիայից, Մոլդովայից, Ղազախստանից, Ադրբեջանից, Ղրղզստանից, Տաջիկստանից, Ուզբեկստանից, Իրանից: Հետ է մնում

Բելառուսից, Ուկրաինայից, Մերձբալթյան երկրներից: Այս կետով ուշագրավ է Վրաստանի կողմից զբաղեցրած 6 – րդ հորիզոնականը, որով Վրաստանը գերազանցում է նաև Մերձբալթյան երկրներին:


12 ցուցանիշներից յուրաքանչյուրը գնահատվում է [0,100] սանդղակով: Երկրի ընդհանուր ցուցանիշը ստացվում է դրանց միջինացմամբ՝ հավասար կշիռներով:



**Գծապատկեր 18: Տնտեսական ազատականության ինդեքս: 2018.**

Աղբյուր՝ <https://www.heritage.org/index/explore?view=by-region-country-year>


**4. Fraser institute: Economic freedom:** Ինդեքսը չափում է տնտեսական ազատության աստիճանը 5 հիմնական ոլորտներում՝ պետության չափսը, դատական համակարգը և սեփականության իրավունքների ապահովությունը, դրամավարկային միջավայրի որակը, միջազգային առևտրի ազատությունը, տնտեսության կարգավորման համակարգը: Այս ոլորտների ներսում 24 բաղադրիչ է առկա, իրենց ենթաբաղադրիչներով: Ինդեքսը պարունակում է 42 փոփոխական, որոնք վերցում են երրորդ կողմ աղբյուրներից ICRG, WB DB, WEF WCR:



**Գծապատկեր 19: Տնտեսական ազատության ինդեքս, 2015**

**Աղբյուր՝ <https://www.fraserinstitute.org/economic-freedom/map>**

**5. WEF, Համաշխարհային մրցունակության ինդեքս:** Համաշխարհային տնտեսական ֆորումը սահմանում է մրցունակությունը որպես ինստիտուտների, քաղաքականությունների, երկրի արտադրողականությունը որոշող գործոնների հավաքածու: Արտադրողականության մակարդակը իր հերթին կանխորոշում է տնտեսության համար հասանելի բարեկեցության առավելագույն մակարդակը: Արտադրողականության մակարդակը նաև որոշում է ներդրումների եկամտաբերությունը տնտեսությունում, որոնք էլ տնտեսական աճի հիմնական շարժիչներն են: Համառոտ՝ առավել մրցունակ տնտեսությունը ժամանակի ընթացքում առավել արագ է աճում: Համաշխարհային մրցունակության ինդեքսը տարբեր կոմպոնենտների կշռված միջինն է, որոնցից յուրաքանչյուրը չափում է մրցունակության մի որևէ ասպեկտ: Այդ կոմպոնենտները խմբավորված են 12 կատեգորիաներում, որոնք կոչվում են մրցունակության հենասյուներ:



**Գծապատկեր 20: ՀՀ խնդրահարույց գործոնները (աճման կարգով) գործարարությամբ զբաղվելու համար ըստ ՀՄՁ-ի**


Աղբյուր՝ <https://www.weforum.org/reports/the-global-competitiveness-report-2017-2018>

Ստորև կներկայացնենք մեր նախընտրած երկրների համար յուրաքանչյուր սյունի զարգացումը ժամանակի ընթացքում: Ժամանակային շարքի աճը նշանակում է դիրքի բարելավում:

**i. Ինստիտուտներ:**

Երկրի ինստիտուցիոնալ միջավայրը կախված է մասնավոր և պետական սեկտորների արդյունավետությունից և վարքագծից: Իրավական և ադմինիստրատիվ միջավայրը որոշում է պետական ինստիտուտների արդյունավետությունը, որոնք էլ մեծ ազդեցություն ունեն մրցունակության և տնտեսական աճի վրա: Դրանք ազդում են ներդրումային որոշումների և արտադրության կազմակերպման վրա և հիմնականում դրանցով են պայմանավորված զարգացման ռազմավարությունները և քաղաքականությունը և այն, թե ինչպես են տնտեսությունում բաշխվում տնտեսական օգուտները: Տնտեսության կայուն զարգացման համար կարևոր է նաև մասնավոր

ինստիտուտների որակը: Վերջին ճգնաժամը արտահայտեց հաշվապահության և հաշվետվությունների թափանցիկության դերը տնտեսությունում:



**Գծապատկեր 21: Ինստիտուտների հենասյունը, 2006- 2015**

Աղբյուր՝ [reports.weforum.org/global.../competitiveness-dataset.xls](http://reports.weforum.org/global.../competitiveness-dataset.xls)


Գծապատկերում արտացոլվում է ՀՀ - ի կողմից հենասյան բարելավում վերջին տարիներին, սակայն դիրքերով զիջում է Վրաստանին և Ադրբեջանին: Հենասյան բաղադրիչների առումով 2017 թվականին լավագույն արդյունքը ներդրողների պաշտպանության հոդվածում է գրանցվել, վատագույնը՝ կարևորագույն կարգավորումների իրավական դաշտի արդյունավետության հոդվածում:

Կիրառելով ինստիտուցիոնալ հենասյան 2018 թվականի ենթացուցանիշները իրականացրել ենք երկքայլ կլաստերային վերլուծություն, որի արդյունքում ստացված կլաստերների կազմը հետևյալն է՝

1. Ուկրաինա ,Մոլդովա (ցածրագույն արդյունք)
2. ՀՀ, Վրաստան, Իրան, Լատվիա, Լիտվա, Ղազախստան, Ղրղզստան, Ռուսաստան, Թուրքիա (միջին արդյունք)
3. Ադրբեջան, Էստոնիա, Տաջիկստան (միջինից բարձր արդյունք):

Ստորև ներկայացված է 2 – րդ կլաստերի մեդիանայի դիրքը 132 երկրների ընտրանքից կազմված ցուցանիշների մեդիանայի նկատմամբ: Մրցունակության ցուցանիշները


համընկնում են իսնտիտուցիոնալ հենասայան ցուցանիշների արդյունքների հետ բոլոր կլաստերների դեպքում:



**Գծապատկեր 22:** Երկքայլ կլաստերային վերլուծության արդյունքները, կլաստերի համեմատումը համակցության արդյունքների հետ

**Աղյուսակ 3:** ՀՀ ինստիտուցիոնալ հենասայան բաղադրիչները 2017 թվականին

1- ին հեմայուն: Ինստիտուտներ	Արժեք	Դիրք
Սեփականության իրավունքներ	4	90
Ինտելեկտուալ սեփականության պաշտպանություն	3,5	93
Պեղական միջոցների շեղում	3,2	77
Հանրության վստահությունը քաղաքական գործիչների նկատմամբ	2,8	79
Անկանոն վճարումներ և կաշառք	3,9	73
Դատական անկախություն	3	106
Կառավարության պաշտոնյաների որոշումների հետ համաձայնում	3,1	71
Պեղական ծախսերի վարնողականություն	3	78
Պեղական կարգավորման բեռ	3,5	56
Օրենքի արդյունավետությունը անահամաձայնություններ կարգավորելիս	3,3	89
Օրենքի արդյունավետություն մարտահրավերային կարգավորումներում	2,8	115
Պեղական քաղաքականության իրականացման թափանցիկություն	4,3	51
Բիզնեսի ահաբեկչական ծախսեր	5,8	40
Բիզնեսի հանցագործության և բռնության ծախսեր	5,5	25
Կազմակերպված հանցագործություն	5,1	57
Ոստիկանական ծառայությունների վստահելիություն	4	79
Ֆիրմաների էթիկական վարքագիծը	3,6	96
Աուդիտի և հաշվետվության ստանդարտների ուժեղություն	4,4	78
Կորպորատիվ խորհուրդների արդյունավետություն	4,4	94
Փոքրամասնություն բաժնետերերի իրավունքների պաշտպանություն	3,6	108
Ներդրողի պաշտպանության ուժեղություն	6	48




**Գծապատկեր 23: Մրցունակության և ինստիտուցիոնալ կարարողականը 2017 թվականին**  
 Աղբյուր՝ <https://www.weforum.org/reports/the-global-competitiveness-report-2017-2018>

**ii. Ենթակառուցվածքներ:**



Էքստենսիվ և արդյունավետ ենթակառուցվածքները տնտեսության արդյունավետ գործունեության կարևորագույն որոշիչն են: Տրանսպորտի բազմազան արդյունավետ ձևերը թույլ են տալիս ձեռնարկատերերին տեղափոխել ապրանքները, ծառայությունները, աշխատողներին ապահով և կարճ ժամկետներում համապատասխան վայրերը: Տնտեսության համար կարևոր է նաև էլեկտրականության լայն և անխափան հասանելիությունը: Կարևոր է նաև հաղորդակցության տարբեր արդյունավետ ձևերի առկայությունը:




Գծապատկեր 24: Ենթակառուցվածքների հենասյունը 2006-2015

Ենթակառուցվածքների առումով ՀՀ – ն էապես զիջում է ընտրված երկրներին դիրքերով, մասնավորապես՝ առաջ է միայն Ղրղզստանից: Առաջատար դիրքերում կրկին Մերձբալթիկան է:

**iii. Մակրոտնտեսական միջավայրը:**

Մակրոտնտեսական կայունությունը կայուն տնտեսական աճի անհրաժեշտ (բայց ոչ բավարար) պայմանն է: Պետական պարտքի մեծ բեռը նվազեցնում է գործարար ցիկլերին հակազդելու՝ պետության հետագա հնարավորությունները և


այլն: Այս առումով ժամանակայն տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ -ն առավել բարենպաստ դիրքերում է եղել, քան Վրաստանը:



Գծապատկեր 25: Մակրոտնտեսական միջավայրի հենասյունը 2006-2015

**iv. Առողջություն և նախնական կրթություն:**


Երկրի մրցունակության և արտադրողականության կենսական պայմաններից է առողջ աշխատուժը: Վատ առողջությունը ծախսեր է ստեղծում բիզնեսի համար, քանի որ հիվանդության դեպքում աշխատակիցները բացակայում կամ ոչ պոտենցիալ արտադրողականությամբ են աշխատում: Առողջապահական ծառայությունների բարելավմանն ուղղված ներդրումները կարևոր են ինչպես զուտ տնտեսական, այնպես էլ բարոյական տեսանկյուններից: Գծապատկերը արտացոլում է ընտրված երկրների շարքում ՀՀ -ի էապես զիջող դիրքերը այս հենասյան տեսանկյունից:



Գծապատկեր 26: Առողջապահության և նախնական կրթության հենասյունը, 2006-2015

**v. Բարձրագույն կրթություն և վերապատրաստում:**


Կարևոր են պարզագույն արտադրական պրոցեսներից և ապրանքներից բացի առավել շատ հավելյալ արժեք պարունակող արտադրության անցնելու համար:



Գծապատկեր 27: Բարձրագույն կրթության և վերապատրաստման հենասյունը 2006-2015

**vi. Ապրանքաշուկայի արդյունավետությունը:**


Նպաստում է պահանջարկի և առաջարկի համաձայնեցմանը և ապրանքների առավել արդյունավետ իրացմանը շուկայում: Կարևոր բնութագրիչներից են մրցակցային միջավայրը, սպառողների պահանջկոտությունը:



**Գծապատկեր 28: Ապրանքաշուկայի արդյունավետության հենասյունը 2006-2015**

**vii. Աշխատաշուկայի արդյունավետությունը:**


Երաշխավորում է, որ աշխատողները գտնվում են իրենց համապատասխան վայրում և մոտիվացված են աշխատել առավելագույն ներուժով: Աշխատաշուկան պետք է լինի առաձգական՝ ապահովելով աշխատողների արագ, ցածր ծախսերով անցումը մի գործունեությունից մյուսին և առկա լինի աշխատավարձերի տատանում՝ առանց սոցիալական քայաքաման: Աշխատաշուկան պետք է կարողանա ապահովել նաև կանանց և տղամարդկանց հավասարությունը:



Գծապատկեր 29: Աշխարհաշուկայի արդյունավետության հենասյունը 2006-2015

**viii. Ֆինանսական շուկայի զարգացվածությունը:**


Արդյունավետ ֆինանսական շուկան կենտրոնացնում է բնակչության խնայողությունները և օտարերկրյա կապիտալը և տրամադրում դրանք բարձր եկամտաբերությամբ ձեռնարկատիրական և ներդրումային նախագծերին: Ֆինանսական շուկան պետք է լինի նաև թափանցիկ և կարգավորվող:



Գծապատկեր 30: Ֆինանսական շուկայի հենասյունը 2006-2015

**ix. Տեխնոլոգիական պատրաստվածություն:**


Սյունը արտացոլում է տնտեսության կողմից նոր տեխնոլոգիաների ադապտացման, առօրյա գործունեությունում դրանց ներդրման, մրցունակության բարձրացման նպատակով նորարարությունների իրականացման ունակությունը:



Գծապատկեր 31: Տեխնոլոգիական պատրաստվածության հենասյունը 2006-2015

**x. Շուկայի փարողությունը:**


Մեծ շուկաները թույլ են տալիս օգտվել մասշտաբի հատույցից: Գլոբալացումը նոր հնարավորություններ է ստեղծել հատկապես փոքր երկրների համար:



Գծապատկեր 32: Շուկայի տարրողության հենասյունը 2006-2015

**xi. Բիզնեսի կապարելագործվածությունը:**


Վերաբերում է երկրում տարբեր կազմակերպությունների միջև առկա կապերի արդյունավետությանը և յուրաքանչյուր կազմակերպության ներսում գործառնությունների և ռազմավարության որակին: Երբ որևէ սեկտորի ընկերությունները և հումքի մատակարարները փոխկապակցված են որևէ աշխարհագրական տարածքում, ստեղծվում են կլաստերներ, որոնք նորարարությունների և արդյունավետության լայն հնարավորություններ են ստեղծում:



Գծապատկեր 33: Բիզնեսի կախարելագործվածության հենասյունը 2006-2015թթ

**xii. Նորարարությունը:**

Կարևորվում է մասնավոր հատվածի կողմից բավարար ներդրումները հետազոտություններում, հետազոտական ինստիտուտների առկայությունը, մտավոր սեփականության պաշտպանությունը, համալսարանների և արտադրության համագործակցությունը:




Գծապատկեր 34: Նորարարության հենասյունը 2006-2015թթ



Այս հենասյունները փոխկապակցված են: Հենասյունների դերը տարբեր է տարբեր տնտեսությունների համար: Ըստ զարգացման փուլի տնտեսությունները բաժանվում են 1,2, 3 փուլում գտնվողների: ՀՀ –ն համարվում է 2- րդ փուլում գտնվող պետություն, որում տնտեսության շարժիչն է հանդիսանում արդյունավետությունը (1-ինում արտադրական գործոնները, 3-րդում նորարարությունը): Ինստիտուտները առավել նշանակալի դերակատարում ունեն 1 - ին փուլում գտնվող տնտեսությունների համար: ՀՀ- ում զարգացման ներկա փուլում նշանակալի հենասյուններն են *Բարձրագույն կրթություն և վերապատրաստում, Արդյունավետ ապրանքաշուկա, Աշխատաշուկա, Ֆինանսական շուկա, Տեխնոլոգիական պատրաստվածություն, Շուկայի փարողություն*: Նշված ցուցանիշների մեծ մասի համար ՀՀ- ն գրացել է անկում վերջին տարիներին:


ՀՄԻ - ն հաշվվում է սյունների միջին կշռված արժեքներով, տնտեսության զարգացման յուրաքանչյուր փուլում առավել մեծ կշիռ է տրվում փուլի համար նշանակալի սյուններին:



**Գծապատկեր 35: ՀՄԻ 2015-2018 թթ. ընտրված երկրների համար**

ԵԱՏՄ, երկրների կազմում ՀՀ –ն մրցունակությամբ չի զիջում միայն Ղրղզստանին, Մոլդովային և Ուկրաինային: Մրցունակությամբ ևս Մերձբալթյան երկրները առաջատար դիրքերում են: Իսկ հարևան երկրների կազմում ՀՀ –ն 3-րդ տեղում է Թուրքիայից և Վրաստանից հետո:


**6. WEF, Ներառական զարգացման ինդեքս:** ՀՏՖ - ն հրապարակում է նաև «Ներառական զարգացման զեկույցը», որը ներառում է երեք հիմնական հասկացություն՝ *քաղաքականության և ինստիտուցիոնալ ցուցանիշներ, ազգային կատարողականի հիմնական ցուցանիշներ, ներառական զարգացման ինդեքս:* Վերջինս ազգային կատարողականի ցուցանիշների միջին կշռված արժեքն է: Ի տարբերություն տնտեսական աճի այն տնտեսական զարգացման առավել բազմաչափ մեծություն է: Ունի 3 հենասյուն՝ *աճ և զարգացում, ներառականություն, միջսերնդային հավասարություն և կայունություն:*



**Գծապատկեր 36: Ազգային կատարողականի հիմնական ցուցանիշները**

Ցուցանիշը կարող է հակադարձ կապի մեջ լինել մեկ շնչի հաշվով ՀՆԱ – ի աճի ցուցանիշի հետ: Հաշվվում է 103 երկրների համար, որոնցից 51% - ը ունեցել է ներառականության անկում վերջին 5 տարում: Դեպքերի ¼ - ի համար պատճառը եղել է հարստության անհավասարությունը, որը դիտարկվող ժամանակահատվածում աճել է 6,3% - ով:

Ինդեքսը հաշվելիս երկրները բաժանվում են 2 խմբի՝ զարգացող և զարգացած: 2017 թվականի արդյունքներով 79 զարգացող երկրների շարքում ՀՀ –ն 47 – թիվ էր, 2018 թվականին 77 երկրների շարքում 45 – թիվ: Ընդ որում մեր կողմից ընտրված երկրներից էստոնիան ընկնում է զարգացած երկրների մեջ: Զարգացող երկրների և մեր ընտրանքի մեջ առաջատարը Լիտվան է: Հարևան երկրների շարքում ՀՀ – ն 4 – թիվ է Ադրբեջանից, Թուրքիայից և Վրաստանից հետո, իսկ ԵԱՏՄ անդամ երկրների մեջ դիրքերը զիջում է Ռուսաստանին, Ղազախստանին: 2018 թվականին ՀՀ ներառականությունը դարձել է կայուն, նախորդ տարվա նվազման միտում ունենալու փոխարեն:




**Գծապատկեր 37: Ներառական զարգացման ինդեքսը 2017-2018 թթ.**

Աղբյուր՝ <https://www.weforum.org/reports/the-inclusive-development-index-2018>

**7. Երկրի ռիսկի միջազգային ուղեցույց ICRG:** Պարունակում է 22 փոփոխական ռիսկի 3 կատեգորիայից՝ քաղաքական, ֆինանսական, տնտեսական: Յուրաքանչյուրի համար կառուցվում է առանձին ինդեքս: Քաղաքական ռիսկի ինդեքսը գնահատվում է 100 միավորանոց սանդղակով, ֆինանսական և տնտեսական ռիսկերինը 50 – ական: Այս 3 ինդեքսները բաժանվում են 2 – ի և ստացված թիվը հանդիսանում է կշիռ՝ երկրի ռիսկի բաղադրյալ ինդեքսում ներառելու համար: Բաղադրյալ միավորները, որոնք գտնվում են [0,100] միջակայքում բաժանվում են կատեգորիաների, որոնք արտահայտում են ՇԱՏ


ՑԱԾՐ-ից (80-100) ՇԱՏ ԲԱՐՁՐ(0-49) ռիսկայնություն: Այս ցուցանիշի տվյալները չունեն բաց հասանելիություն: Ընտրված երկրների համար գծապատկերները կառուցված են այնպես, որ ռիսկայնության աճը և նվազումը համապատասխանի գծապատկերում տվյալների դիրքին:




**Գծապատկեր 38: ԵՌՄՈՒ, քաղաքական, ֆինանսական, տնտեսական ռիսկերի ռեյտինգը 2016 թ հուլիսի դրությամբ**

Աղբյուր՝ <https://epub.prsgroup.com/products/icrg-historical-data>


Տնտեսական ռիսկի տեսանկյունից լավագույն արդյունքները Մերձբալթյան երկրներին են, ՀՀ – ի միավորը 50 – ից 34: Հարևան երկրների շարքում զիջում է Թուրքիային(Վրաստանը չի ռեյտինգավորվում): ԵԱՏՄ երկրների շարքում ՀՀ –ի ռեյտինգը համընկնում է Ռուսաստանի հետ և առավել լավ ցուցանիշ ունի, քան մյուս առկա երկրներին է: Ֆինանսական ռիսկի տեսանկյունից հարևանների շարքում զիջում է Թուրքիային և Ադրբեջանին: ԵԱՏՄ երկրների շարքում լավագույն ցուցանիշը ՌԴ – ինն է:




Գծապատկեր 39: ԵՌՄՈՒ, համալիր ռիսկի ռեյտինգը 2016 թ հուլիսի դրությամբ և կանխարեսումը մինչև 2021 թվականը




Գծապատկեր 40: ԵՌՄՈՒ, քաղաքական ռիսկի առանձին բաղադրիչները 2016 թ հուլիսի դրությամբ




**Գծապատկեր 41: ԵՌՄՈՒ, քաղաքական ռիսկի ռեյտինգը 2016 թ հուլիսի դրությամբ և կանխատեսումը մինչև 2021 թվականը**



**Գծապատկեր 42: ԵՌՄՈՒ, ֆինանսական ռիսկի բաղադրիչները միավորներով 2016 թ հուլիսի դրությամբ**



**Գծապատկեր 43: ԵՌՄՈՒ, ֆինանսական ռիսկի բաղադրիչները միավորներով 2016 թ հուլիսի դրությամբ և կանխատեսումը մինչև 2021 թվականը**




**Գծապատկեր 44: ICRG , 2017**

**8. The World bank FINDEX:** Ֆինանսական ներառականությունը առանցքային նշանակություն ունի աղքատության կրճատման և ներառական տնտեսական աճի համար: Երբ մարդիկ մասնակցում են ֆինանսական համակարգին, նրանք ավելի մեծ հնարավորություններ են ունենում բիզնես սկսելու և ընդլայնելու, երեխաների կրթությունում ներդրումներ կատարելու, ֆինանսական շուկերը կլանելու տեսանկյուններից: 2011 թվականին ՀԲ – ն ներկայացրեց այս ինդեքսը, որը աշխարհի ամենաընդգրկուն տեղեկատվությունն է պարունակում խնայողությունների, փոխառությունների, վճարումների կատարման, ռիսկերի

կառավարման վերաբերյալ: 2014 թվականին թարմացված տարբերակով այս ինդեքսը ավելի քան 100 ինդիկատոր է տրամադրում այդ թվում ըստ սեռի, տարիքի և եկամտի դասակարգված: Տվյալները հավաքագրվում են աշխարհի 140 երկրից ազգայնորեն ներկայացուցչական 15 – ից բարձր տարիքի բնակչությունից:

**9. Վարկեր մասնավոր հատվածին / ՀՆԱ հարաբերակցություն:** Ֆինանսական սեկտորի զարգացվածության կարևորագույն ցուցանիշներից է և մի շարք հետազոտություններում ցույց է տրվում կապը ՀՆԱ աճի տեմպի հետ: Վերջին 10 տարիների ցուցանիշներով ՀՀ – ում ցուցանիշը էականորեն զիջում է համեմատվող մյուս երկրների ցուցանիշներին: 2016 թվականի դրությամբ զիջում ենք Էստոնիային, Թուրքիային, Վրաստանին, Ռուսաստանին և Չեխիային:



**Գծապատկեր 45: Վարկեր մասնավոր հատվածին / ՀՆԱ հարաբերությունը, փոկոս Աղբյուր՝ <http://databank.worldbank.org>**


**10. The World bank: Doing business:** Ներկայացնում է 2 ազդեցացված մեծություն՝ սահմանային միավորից հեռավորությունը և բիզնեսով զբաղվելու հեշտության ռեյտինգը, որը հիմնված է սահմանային միավորից հեռավորության վրա: Բիզնեսով զբաղվելու հեշտության ռեյտինգը համեմատում է տնտեսությունները, սահմանից հեռավորությունը ցույց է տալիս տվյալ տնտեսության՝ լավագույն պրակտիկայից ունեցած բացարձակ հեռավորությունը: Տարիների կտրվածքով համեմատություն կատարելիս սահմանից հեռավորության ցուցանիշը ցույց է տալիս, թե տվյալ տնտեսությունում բացարձակ առումով ինչպես է փոփոխվել գործարար միջավայրը ներքին ձեռնարկատերերի համար: Իսկ բիզնեսի



հեշտության ռեյտինգը արտահայտում է, թե ինչպես է փոխվել գործարար միջավայրը ի համեմատ մյուս տնտեսությունների: Սահմանագծից հեռավորության միավորը ցույց է տալիս տվյալ տնտեսության և լավագույն տնտեսության խզումը 10 Doing business թեմայով 41 ցուցանիշների համար:

2018 թվականին ՀՀ –ն զիջել է դիրքերը 9 հորիզոնականով՝ զբաղեցնելով 47 – րդ տեղը նախորդ տարվա 38-րդի համեմատ: Լավագույն սահմանագծից մոտիկությունը 72,51 է: Հայաստանը 2016/17 թթ. Ջգալի բարելավել էլեկտրաէներգիայի ստացումը, հեշտացրել գույքի գրանցումը:

Աշխարհում առաջատար են Նոր Զելանդիան, Սինգապուրը և Դանիան: Վրաստանը 9 –րդ տեղում է, Ադրբեջանը՝ 57, Թուրքիան՝ 60, Իրանը՝ 124, Ռուսաստանը՝ 35- րդ:



**Գծապատկեր 46: Doing business, 2018 ՀՀ դիրքը յուրաքանչյուր ցուցանիշով**



**Գծապատկեր 47: Doing business, 2018 ՀՀ մոտիկությունը լավագույն պրակտիկային (100)**

**Աղյուսակ 3: Doing business, 2018 Եվրոպա և Կենտրոնական Ասիա**

Economy	Rank (1–190)	Distance to frontier score (0–100)		# of Reforms	
	DB2018	DB2017	DB2018	DB2017	DB2018
Albania	65	67.74	68.70	2	1
Armenia	47	71.92	72.51	3	2
Azerbaijan	57	67.07	70.19	3	4
Belarus	38	74.51	75.06	2	1
Bosnia and Herzegovina	86	63.78	64.20	0	0
Bulgaria	50	71.81	71.91	0	0
Croatia	51	71.65	71.70	1	1
Cyprus	53	72.12	71.63	5	0
Georgia	9	79.92	82.04	2	3
Kazakhstan	36	74.38	75.44	7	3
Kosovo	40	68.51	73.49	1	3
Kyrgyz Republic	77	65.16	65.70	2	1
Lithuania	16	78.82	79.87	3	4
Macedonia, FYR	11	81.39	81.18	2	0
Moldova	44	72.80	73.00	2	1
Montenegro	42	71.54	73.18	2	1
Romania	45	72.70	72.87	3	1
Russian Federation	35	74.69	75.50	5	3
San Marino	93	62.50	62.47	1	0
Serbia	43	72.87	73.13	2	3
Tajikistan	123	55.93	56.86	2	2
Turkey	60	67.98	69.14	1	2
Ukraine	76	63.85	65.75	1	3
Uzbekistan	74	61.87	66.33	3	5

Աղբյուր՝ <http://www.doingbusiness.org/data/exploreeconomies/armenia>

<http://www.doingbusiness.org/reports/global-reports/doing-business-2018>

Տարածաշրջանի ցուցանիշների ամփոփումը ցույց է տալիս, որ մեր ընտրած երկրների ընտրանքում առաջատար դիրքում Վրաստանն է, այնուհետև Լիտվան /16/ և Ռուսաստանը /35/: ԵԱՏՄ երկրների շարքում և տարածաշրջանում վատագույն արդյունքը Տաջիկստանինն է՝ 123: Տարածաշրջանում լավագույն արդյունքները գրանցվել են փոքր ներդրողների պաշտպանության և սեփականության գրանցման ցուցանիշներում: Տարածաշրջանում ամենադժվարը շինարարության թույլտվության ստացումն է և էլեկտաէներգիայի հասանելիությունը:

**11. The World Justice Project, Rule of Law Index:** Թույլ է տալիս քանակապես չափել օրենքի գերակայությունը 113 երկրներում տալով միավորներ և ռեյտինգներ 8 գործոնի վերբերյալ՝ պետական իշխանության սահամնափակումներ, կոռուպցիայի բացակայություն, կառավարության

թափանցիկություն, ֆունդամենտալ իրավունքներ, կարգ և ապահովություն, կարգավորման հարկադրում, քաղաքացիական արդարություն, քրեական արդարություն:

**12. World values survey:** Տվյալներ երկրի գրեթե ողջ բնակչության հավատալիքների, արժեքների, խթանների և դրանց փոփոխությունների մասին:

**ԳԼՈՒԽ 3. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՆՏՐՎԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Ամփոփելով նախորդ գլխում ներկայացված վիճակագրական տվյալները այժմ կփորձենք ցույց տալ, թե որքանո՞վ և ինչպե՞ս է ինստիտուցիոնալ միջավայրի որակը ազդում երկրի մակրոտնտեսական կատարողականի վրա:

Ազդեցությունը բնութագրելու համար կկիրառենք տարբեր մոտեցումներ և կստուգենք առաջադրվող վարկածների հավաստիությունը:

1. Հաշվի առնելով ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող ցուցանիշների միջև առկա նեղ կոռելացիոն կապը, *կկառուցենք համալիր ինդեքս*, որը կանվանենք ինստիտուցիոնալ միջավայրի որակի ինդեքս, այսուհետ՝ *ԻԻ*: Այնուհետև կգնահատենք կապը ինդեքսի և երկրի բարեկեցության մակարդակի միջև, որպես բարեկեցության մակարդակը բնութագրող ցուցանիշ վերցնելով 1 շնչի հաշվով ՀՆԱ – ն ընթացիկ և հաստատուն գներով:
2. Հաջորդ քայլում կկիրառենք որոշակի ձևափոխությամբ գրավիտացիոն մոդել, որի նպատակն է պարզել, թե *ինչ գործոններով է պայմանավորված ինստիտուցիոնալ միջավայրի որակի տարբերությունները տարբեր երկրներում և դրանցից որոնք են առավել ազդեցիկ*:
3. Երրորդ մասում կփորձենք պարզել, թե *որքանով է ժամանակի ընթացքում ինստիտուցիոնալ միջավայրի որակի փոփոխությունները*:

### 3.1. Ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող համալիր ինդեքսի կառուցումը

Նոր համալիր ինդեքսը ներառում է.

- ▶ **Պետության և պետական համակարգի գործունեության** 4 ցուցանիշները ՀԲ պետական կառավարման որակը նկարագրող հետազոտությունից, մասնավորապես կոռուպցիայի վերահսկողություն(CC), օրենքի գերակայություն (RL), պետության արդյունավետություն և քաղաքական կայունություն և բռնությունների բացակայություն(PS-AV)
- ▶ *Տնտեսական գործունեության ազատականության ինդեքս՝ HF,*
- ▶ *Քաղաքական և քաղաքացիական ազատականության ինդեքսը՝ FH,*

- ▶ *Ֆինանսական սեկտորի* զարգացվածությունը բնութագրող վարկեր մասնավոր հատվածին ՀՆԱ հարաբերությունը՝ C/GDP,
- ▶ *Մարդկային կապիտալի զարգացումը* բնութագրող *գիտելիքահեն տնտեսության ինդեքսը՝ the world bank, knowledge economy index (KEI):*

Ինդեքսը կառուցելիս նախ բոլոր ցուցանիշները նորմավորվել են գծային եղանակով և բերվել [0,100] միջակայքի: Ինդեքսը կառուցվել է 2016 թվականի տվյալներով: Կոռելացիոն մատրիցը արտացոլում է ցուցանիշների միջև գծային դրական ուժեղ կապի առկայությունը:

**Աղյուսակ 4: Ինստ. ցուցանիշների կոռելացիոն մատրից**

	CC1	RL	RQ	GEF	POLITSTAB	FH	HF	CR/GDP	KEI
CC1	1								
RL	0,95373	1							
RQ	0,896502	0,931368	1						
GEF	0,922958	0,952715	0,941885	1					
POLITSTA	0,714154	0,718202	0,675665	0,68325	1				
FH	0,620832	0,644065	0,652618	0,600027	0,587033	1			
HF	0,775074	0,804085	0,903502	0,801095	0,608943	0,515358	1		
CR/GDP	0,581808	0,622571	0,612414	0,678278	0,38975	0,317596	0,495383	1	
KEI	0,81325	0,864753	0,883403	0,902113	0,624055	0,612457	0,705624	0,610944	1

Ինդեքսը կառուցելիս կոռուացիան և ֆինանսական սեկտորը բնութագրող ցուցանիշներին տրվել է 2 կշիռ, մնացածներին՝ 1: Ինդեքսը հաշվվել է 122 երկրների համար: Ընտրված երկրների շարքում լավագույն ինստիտուցիոնալ միջավայր ունեն ՀՍ Եվրոպայի երկրները, Սինգապուրը, Ավստրալիան, Ճապոնիան: Հետխորհրդային երկրներից առաջատարը Էստոնան է, այնուհետ Լիտվան և Լատվիան: Հարևան երկրների շարքում առաջատարը Վրաստանն է, որը 42 – թղ հորիզոնականում է: Հայաստանը երկրորդ տեղում է, զբաղեցնում է 68 – թղ հորիզոնականը և գերազանցում է Թուրքիային, Ադրբեջանին և Իրանին: ԵԱՏՄ առկա երկրների շարքում ՀՀ -ն առաջատարն է:


**Աղյուսակ 5: Լավագույն ինստիտուցիոնալ միջավայրով երկրների փասնյակը**

Country Name	NEW INDEX
Switzerland	90,22855213
Norway	85,95354433
Sweden	85,13016369
Singapore	84,43161082
Australia	83,73972995
Finland	82,61713474
Netherlands	82,2225041
Japan	81,99358327
Luxembourg	80,76785737


**Աղյուսակ 6: Հեթոտրոհրդային և հարևան երկրները**

	World rank	Sample rank
Estonia	18	1
Lithuania	27	2
Latvia	30	3
Georgia	42	4
Armenia	68	5
Turkey	75	6
Kazakhstan	85	7
Moldova	88	8
Russian Federation	97	9
Belarus	99	10
Ukraine	100	11
Azerbaijan	104	12
Iran, Islamic Rep.	109	13
Kyrgyz Republic	111	14
Tajikistan	121	15

Այժմ ստուգենք աշխատանքում մեր կողմից բազմիցս նշած վարկածը, որ ինստիտուցիոնալ միջավայրի որակի և երկրի բարեկեցության մակարդակի միջև առկա է ուղղակի դրական կապ: Ռեգրեսիայի արդյունքները հավաստում են, որ ինստիտուցիոնալ միջավայրի որակը բացատրում է 1 շնչի հաշվով ՀՆԱ - ի վարիացիայի 70% - ը: Մասնավորապես ինդեքսի միավոր աճը հանգեցնում է 1 շնչի հաշվով ՀՆԱ - ի աճի միջինը 5,8% - ով: Նշենք նաև, որ գոյություն ունի հակառակ կապը:



**Գծապատկեր 48: 1 շնչի հաշվով ՀՆԱ –ի կապը ինստիտուցիոնալ միջավայրի հետ**



**Գծապատկեր 49: 1 շնչի հաշվով հաստատուն գներով ՀՆԱ –ի կապը ինստիտուցիոնալ միջավայրի հետ**


ՀՀ հեռանկարային զարգացման ծրագրին համապատասխան 1 շնչի հաշվով ՀՆԱ – ի կանխատեսվող արժեքները ապահովելու համար ինստիտուցիոնալ

միջավայրը պետք է բարելավվի շուրջ 16 միավորով, ինչը հավասար է Հունգարիայի և Հունաստանի ներկայիս ցուցանիշներին:

**Աղյուսակ 7: 1 շնչի հաշվով ՀՆԱ -ն և ինստիտուցիոնալ միջավայրը**

Տարի	2017	2021	2025
ՀՆԱ 1 շնչի հաշվով	4171	6252	9441
Կանխատեսմանը համապատասխան ինդեքսը	35.8	42.76	49.84

1 շնչի հաշվով ՀՆԱ -ի նմանատիպ մակարդակ ունեցող երկրների շարքում ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրի որակը բարձր է ՆԽՍՀՄ և հարևան երկրների մեծ մասից, սակայն զիջում է Վրաստանին և Եվրոպական երկրներին



**Գծապատկեր 50: 1 շնչի հաշվով հաստատված գներով ՀՆԱ -ի նմանատիպ մակարդակ ունեցող երկրներ**

**3.2 Ինստիտուցիոնալ միջավայրի որակի տարբերությունները պայմանավորող գործոնների բացահայտումը. ձգողականության մոդելի գնահատում**



### 3.2.1 Ձգողականության մոդելի կիրառումը՝ երկրների ինստիտուցիոնալ միջավայրի հեռավորությունը չափելու համար

**Ձգողականության մոդելի բովանդակությունը, գանհատման առանձնահատկությունները:** Գրավիտացիոն մոդելը միջազգային և միջտարածաշրջանային առևտրային հոսքերի ուսումնասիրման առավել հայտնի մոդելներից մեկն է: Էությունը հիմնված է ֆիզիկայի ձգողականության ուժի վրա, ըստ որի 2 մարմինների միջև ձգողականության ուժը ուղիղ համեմատական է դրանց զանգվածին և հակադարձ համեմատական դրանց միջև առկա հեռավորությանը.

$$F = G * \frac{m_1 * m_2}{d^2}$$

Յան Տինբերգենը կիրառելով այս օրենքը ցույց տվեց, որ գոյություն ունի կապ  $i$  երկրից  $j$  արտահանման արժեքի, դրանց տնտեսական չափսերի և առևտրային ծախսերի միջև հետևյալ տեսքով.

$$x_{ij} = k * \frac{y_i^\alpha * y_j^\beta}{t_{ij}^\gamma}$$


$$\alpha > 0, \beta > 0, \gamma > 0$$

Տինբերգենը գնահատել է այս մոդելը լոգարիթմական տարբերակով ՓԲԵ եղանակով, որպես տնտեսական չափսերի փոփոխական կիրառելով երկրի ՀՆԱ - ի մեծությունը, առևտրի ծախսերի փոփոխական երկրների միջև հեռավորությունը, կիրառելով կեղծ փոփոխականներ ընդհանուր սահմանի, առևտրային միություններին անդամակցության վերաբերյալ: Էմպիրիկ գրավիտացիոն հավասարումը հանդիսանում է համաշխարհային տնտեսությունում դիտարկվող ամենակայուն փոխկապակցվածություններից մեկը: Կիրառական հետազոտությունների մեծ մասում գրավիտացիոն մոդելը գնահատվում է պանելային տվյալների հիման վրա, ինչը թույլ է տալիս առավել ամբողջական որոշել 2 երկրների միջև անհատական տարբերությունները, ինչպես նաև հետևել միջազգային առևտրում տեղի ունեցող փոփոխություններին: Գրավիտացիոն մոդելի առավել վաղ պանելային սպեցիֆիկացիան առաջարկվել է Matyas - ի կողմից, 1997 թվականին: Այն ներկայացնում է ներմուծողի և արտահանողի

ժամանակի մեջ չփոփոխվող էֆեկտներով մոդիֆիկացված մոդել, ավելացնելով տարիների համար կեղծ փոփոխականներ՝ գլոբալ ցնցումները հաշվի առնելու նպատակով.

$$\ln x_{ijt} = a_0 + a_1 \ln y_{it} + a_2 \ln y_{jt} + a_4 \ln t_{ijt} + a_i D_i + a_j D_j + b_t Year_t + \varepsilon_{ijt}$$

Տարիների կեղծ փոփոխականների ներառումը մոդելում մեկնաբանվում է հետևյալ կերպ, որ չդիտարկվող գլոբալ շոկերը, որոնք ազդում են առևտրի վրա և սպեցիֆիկ են տվյալ ժամանակահատվածին կարող են փոփոխել գծի բարձրությունը: Իսկ ժամանակի գործոնը հաշվի չառնելու դեպքում թեքությունը սխալ է ստացվում:



**Գծապատկեր 51: Գրավիտացիոն մոդելի գնահատման տարբերությունը առանց ժամանակային գործոնի**

Սակայն, գրավիտացիոն մոդելի լոգարիթմական տարբերակով գնահատումը առաջացնում է հետերոսկեդաստիկություն, ինչը ՓՔԵ ոչ ունակային գնահատականների է հանգեցնում: Ընդ որում այս խնդիրը չի լուծվում նաև հետերոսկեդաստիկությամբ ճշգրտված ստանդարտ սխալներով գնահատելու դեպքում, քանի որ բացի սխալների դիսպերսիայի անկայունությունից, սխալները կոռելացված են նաև բացատրող փոփոխականների հետ:

Ձևափոխված գրավիտացիոն մոդելը կառուցելիս ենթադրվում է, որ ինստիտուցիոնալ միջավայրի որակի տարբերությունները մեծապես պայմանավորված են հիմնարար պատմա-աշխարհագրական գործոններով, ինչպիսիք են երկրների միջև հեռավորությունը, ընդհանուր սահմանի, լեզվի

անկայությունը: Երկրի ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման վրա ազդում է հարևան և հիմնական առևտրային գործընկեր երկրներում առկա ինստիտուցիոնալ միջավայրը: Ինստիտուտների էվոլյուցիան ինչ – որ չափով հանդիսանում է գործընկեր երկրներից փոխառության արդյունք: Այս հարցում մեծ է հատկապես առևտրային գործընկերների դերը: Համեմատաբար թույլ զարգացած ինստիտուցիոնալ միջավայրով առևտրային գործընկերները հարմարեցնում են իրենց ինստիտուտները առավել զարգացած ԻՄ երկրին:

Գրավիտացիոն մոդելը կառուցելու նպատակով կսահմանենք 2 երկրների միջև ինստիտուցիոնալ հեռավորությունը որպես ԻԻ - արժեքների տարբերության բացարձակ մեծություն՝

$$INST\_DIST_{ij} = |inst\_index_i - inst\_index_j|$$

Ընդհանուր մոդելը ունի հետևյալ տեսքը՝

$$INST\_DIST_{ij} = \ln \frac{GDP_{ci}}{GDP_{cj}} + Geography_{ij} + DUM[OECD_{ij}] + DUM[EASEU_{ij}] + DUM[POSTSOV_{ij}] + Trade\ openness_{ij} + raw\ export_{ij}$$

Որտեղ՝

$\ln \frac{GDP_{ci}}{GDP_{cj}}$  -ն 12/հ ՀՆԱ – ի հարաբերությունն է i և j երկրների միջև, ընդ որում

համարիչում մեծ ՀՆԱ – ն է,

*Geography<sub>ij</sub>*-ն կեղծ փոփոխական է, որը ընդունում է 1 արժեք, եթե 2 երկրները ունեն ընդհանուր սահման և 0 հակառակ դեպքում,

*DUM[OECD<sub>ij</sub>]*, *DUM[EASEU<sub>ij</sub>]*, *DUM[POSTSOV<sub>ij</sub>]* կեղծ փոփոխականներ են, ընդունում են 1 արժեք, եթե 2 երկրները հանդիսանում են տվյալ միավորի անդամ և 0 հակառակ դեպքում:

*Trade openness*<sub>ij</sub> - 2 երկրների միջև արտաքին առևտրի բացությունը արտացոլող ցուցանիշի բացարձակ տարբերությունը (արտահանման և ներմուծման գումարի հարաբերությունը ՀՆԱ - ին):

*raw export*<sub>ij</sub> - 2 երկրների միջև արտահանման մեջ հումքային ապրանքների տեսակարար կշռի բացարձակ տարբերությունը:


Կիրառելով այս փոփոխականները մեր նպատակն է ստուգել հետևյալ վարկածների հավաստիությունը.

- ✓ Ինստիտուցիոնալ տարբերությունները այնքան մեծ են, որքան մեծ է տնտեսական զարգացվածության միջև տարբերությունը՝ մեծ է  $\ln \frac{GDP_{ci}}{GDP_{cj}}$  ցուցանիշի մեծությունը, *գործակցի նշանը* +
- ✓ Ինստիտուցիոնալ խզման վրա մեծապես ազդում են պատմամշակութային գործոնները. Ընդհանուր սահմանի բացակայությունը նպաստում է խզման աճին, *գործակցի նշանը* -
- ✓ Ինստիտուցիոնալ միջավայրի տարբերությունները կախված են երկրների որոշակի տնտեսական, աշխարհագրական, պատմականորեն ձևավորված խմբերի անդամակցությունից: *գործակցի նշանը* -
- ✓ Առևտրային հարաբերությունների ինտենսիվության և կառուցվածքի նմանությունները նպաստում են ինստիտուցիոնալ ճեղքի փոքրացմանը: *գործակցի նշանը* + :

Վարկածների ստուգումը իրականացվել է ընտրված 39 երկրների ընտրանքի ցուցանիշների միջոցով, որոնց կազմում են ՏՀԶԿ, նախկին ԽՍՀՄ, ներկա ԵԱՏՄ երկրները, ինչպես նաև համաշխարհային առաջատարները:

Հետևյալ գծապատկերը արտացոլում է ՀՀ - ի՝ ընտրված երկրներից ունեցած ինստիտուցիոնալ հեռավորությունը 2016 թվականի տվյալներով: Բացասական հեռավորությունը արտացոլում է, թե որքանով է ՀՀ - ի ինստիտուցիոնալ միջավայրը վատը, դրական հեռավորությունը՝ լավը: Ըստ գծապատկերի ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրը ընտրված հարևաններից զիջում է միայն Վրաստանին: Բացարձակ հեռավորությունը փոքր է Թուրքիայի, Ղազախստանի, Մոլդովայի, ՌԴ, Բելառուս, Ուկրաինա, Ադրբեջան, Ղրղզստան, Սերբիա, Ռումինիա,

Բուլղարիա, Հունաստան, Խորվաթիա, Վրաստան, Իտալիա, Սլովակիայի դեպքում: Ցանկի մեջ արտացոլվում է աշխարհագրական գործոնը, անցած պատմական/հետխորհրդային ուղին: Արտացոլվում է նաև այն հանգամանքը, որ հեռավորությունը համեմատաբար փոքր է միևնույն տնտեսական ինտեգրման գոտում գտնվող երկրների միջև: Ստորև ռեգրեսիոն հավասարումների միջոցով կստուգենք այս վարկածների հավաստիությունը 2016 թվականի համար:




**Գծապատկեր 52: ՀՀ ինստիտուցիոնալ հեռավորությունը մյուս երկրներից**

Վարկածների ստուգման համար ընտրված առաջին երկիրը ընտրանքի առաջատարն է: Լավագույն մոդելը արտացոլում է այն հանգամանքը, որ Նորվեգիայի ինստիտուցիոնալ հեռավորությունը մյուս երկրներից բացատրվում է տնտեսական զարգացմամբ, աշխարհագրական դիրքով, ՏՀԶԿ անդամակցությամբ: Մասնավորապես 1 շնչի հաշվով ՀՆԱ –ի հարաբերության 1 տոկոս աճը մեծացնում է Նորվեգիայից ունեցած խզումը 12,642 միավորով, աշխարհագրական ընդհանուր սահմանի առկայությունը կրճատում է խզումը 11,249 միավորով, ՏՀԶԿ անդամ երկիր հանդիսանալը կրճատում է խզումը 9,962 միավորով: Նորվեգիայից ունեցած ինստիտուցիոնալ խզման վարիացիայի շուրջ 84 տոկոսը բացատրվում է այս 3 գործոնով: Բացարձակ մեծությամբ ամենազդեցիկը ՀՆԱ –ի միջև տարբերություններն են:

Վարկածի ստուգում	Երկիր	R <sup>2</sup>		t-stat	prob
GDP	Նորվեգիա	0.816	Dist_from_Norway=4.151+16.737*d_gdp	1.621 13.031	0.114 .000
GEO		0.824	Dist_from_Norway=6.154+15.949*d_gdp- -9.0.36*geo	2.199 11.820 -1.611	0.034 0.000 0.116
MEMBER		0.836	Dist_from_Norway=19.215+12.642*d_gdp- -11.249*geo – 9.962*oecd	2.624 5.885 -2.036 -1.934	0.012 0.000 0.049 0.061

Երբ փաստացի արժեքը գերազանցում է կանխատեսված արժեքը, նշանակում է երկրի ինստիտուցիոնալ միջավայրի որակը առավել վատն է, քան այն կարող էր լինել՝ պայմանավորված միայն ՀՆԱ, աշխարհագրական դիրքով և միությանը անդամակցությամբ:




**Գծապատկեր 53: Նորվեգիայի ինստիտուցիոնալ հեռավորությունը մյուս երկրներից**

ՀՀ – ն գտնվում է ռեգրեսիայի գծից վեր, այսինքն ՀՀ-ի Նորվեգիայից ունեցած ինստիտուցիոնալ հեռավորությունը ավելի քիչ է, քան կանխատեսվում է: Վրաստանի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի դեպքում ևս արդյունք առավել լավն

է, քան պետք է լիներ: Ադրբեջանի, Բելառուսի, Ռուսաստանի, Ղազախստանի, Թուրքիայի դեպքում պատկերը հակառակն է: Ակնհայտ է, որ գծապատկերի ՀՎ-ԱՐՄ հատվածում գտվող երկրների ինստիտուցիոնալ միջավայր առավել լավն է: Վարկածների ստուգման համար ընտրված հաջորդ երկիրը Էստոնիան է՝ որպես նախկին ԽՍՀՄ, բայց առաջընթաց զարգացում ապրած երկիր:

Վարկածի ստուգում	Երկիր	R <sup>2</sup>		t-stat	prob
GDP	Էստոնիա	0.462	Dist_from_EST=6.809+15.246*d_gdp	2.27 5.797	0.029 .000
GEO		0.502	Dist_from_EST=4.637+16.272*d_gdp+12.435*geo	1.503 6.302 1.995	0.141 0.000 0.054
MEMBER		0.679	Dist_from_EST=35.303+4.351*d_gdp-0.213*geo – 25.483*oecd	4.9333 1.305 -0.037 -4.568	0.000 0.200 0.971 0.061
MEMBER		0.676	Dist_from_EST=42.950-30.681*oecd	14.559 -8.968	.000 .000

Էստոնիայի ինստիտուցիոնալ հեռավորությունը մյուս երկրներից բացատրող լավագույն հավասարումը արտացոլում է այն հանգամանքը, որ ինստիտուցիոնալ հեռավորության վարիացիայի շուրջ 68 տոկոսը բացատրվում է ՏՀԶԿ անդամակցությամբ՝ ՏՀԶԿ անդամակցությունը բերում է ինստիտուցիոնալ հեռավորության կրճատման 30,681 միավորով: Փաստացի և կանխատեսված արժեքների տարբերությունը արտացոլում է այն հանգամանքը, որ ՀՀ – ն և Վրաստանը առավել լավ արդյունք են ցուցաբերում, քան կարող էին, քանի որ ՏՀԶԿ անդամ երկիր չեն: Ռուսաստանը, Տաջիկստանը, Ղրղզստանը, Ադրբեջանը, Ուկրաինան, Թուրքիան ընդհակառակը՝ կանխատեսվածից առավել մեծ շեղում ունեն:



**Պժապատկեր 54: Էստոնիայի ինստիտուցիոնալ հեռավորությունը մյուս երկրներից**

Դիտարկվող հաջորդ երկիրը Հայաստանն է, փոփոխականը՝ ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրի հեռավորությունը մյուս երկրներից:


Վարկած	Երկիր	R <sup>2</sup>		t-stat	prob
GDP	ՀՀ	0.120	Dist_from_ARM=16,27+8,546*d_gdp	4,187	0,000
				2,482	0,018
MEMBER		0.483	Dist_from_AM=18.349+12.374*d_gdp- 20.043*post	6.105	0.000
				4.515	0.000
				-5.194	0.000
GEO		0.493	Dist_from_AM=19.191+11.69*d_gdp-17.945*post- -7.759*geo	6.302	0.000
				4.229	0.000
				-4.329	0.000
				-1.306	0.200
MEMBER		0.544	Dist_from_AM=16.564+13.607*d_gdp- 24.473*eatm	5.921	0.000
				5.192	0.000
				-5.951	0.000
MEMBER		0.650	Dist_from_AM=18.706+12.862*d_gdp-	7.402	.000



			23.649*eatm-15.747*geo	5.580	.000
				-6.552	0.000
				-3.455	0.001

Գնահատված հավասարումներից լավագույնը արտացոլում է ինստիտուցիոնալ միջավայրի տարբերությունների պայմանավորվածությունը ՀՆԱ –ից, ԵԱՏՄ անդամ երկրներից(ավելի քան հետխորհրդային) և աշխարհագրական դիրքից: Մասնավորապես ՀՆԱ – ի տարբերությունների 1 տոկոս աճը բերում է հեռավորության աճի 12,862, երկրի ԵԱՏՄ անդամակցությունը բերում է հեռավորության կրճատման 23,649 միավորով, աշխարհագրական դիրքը բերում է կրճատման 15,747 միավորով: ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրը առավելապես նման է ԵԱՏՄ անդամ երկրներին և իր հարևաններին: ՀՀ – ի համար գնահատել ենք նաև հավասարում ներառելով նոր կեղծ փոփոխական, որը ընդունում է 1 արժեք, երբ երկիրը մտնում է ՀՀ խոշոր առևտրային գործընկերների մեջ, Օ՝ հակառակ դեպքում: Ենթադրվում է, որ պետք է հակադարձ կապ առկա լինի: Սակայն վիճակագրորեն ոչ նշանակալի արդյունք է ստացվել: Այսինքն ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրի հեռավորությունը 2016 թվականին մյուս երկրներից չի բացատրվում առևտրային գործընկեր լինելու փաստով:<sup>1</sup>

<sup>1</sup> Արդահանում՝ Ռուսաստան(21%), Բուլղարիա(9.1%), Գերմանիա(7.6%), Շվեյցարիա(5.3%), Նիդեռլանդներ(3.1%), Ներմուծում՝ Ռուսաստան(31%), Գերմանիա(5%), Իրալիա(4%), Ուկրաինա(3.1%), Բելգիա (1.8%), Աղբյուր՝ <https://atlas.media.mit.edu/ru/profile/country/arm/>




**Գծապատկեր 55: ՀՀ ինստիտուցիոնալ հեռավորությունը մյուս երկրներից**

Ըստ մոդելի ՀՀ հեռավորությունը առաջատար երկրներից պետք է ավելի փոքր լիներ, քան փաստացիորեն կա, իսկ ԵԱՏՄ անդամ երկրներից պետք է ավելի մեծ լիներ, քան փաստացի հեռավորությունն է: Վրաստանին պետք է ավելի մոտ լիներ, քան փաստացի արժեքն է:

Այժմ կդիտարկենք Վրաստանի ինստիտուցիոնալ հեռավորությունը պայմանավորող գործոնները:

Վարկած	Երկիր	R <sup>2</sup>		t-stat	prob
GDP	Վրաստան	0.072	Dist_from_GEO=11.426+4.224*d_gdp	3.223	0,003
				1.990	0,054
MEMBER		0.525	Dist_from_GEO=- 4.840+11.352*d_gdp+20.620*post	-1.307	0.200
				5.898	0.000
				6.025	0.000
GEO		0.517	Dist_from_GEO=- 5.699+11.784*d_gdp+20.239*post+2.602*geo	-1.423	0.164
				5.685	0.000
				5.763	0.000
				0.597	0.555

Վրաստանի ինստիտուցիոնալ հեռավորությունը բնութագրող լավագույն հավասարումը ներառում է ՀՆԱ, հետխորհրդային կեղծ փոփոխականը և աշխարհագրական դիրքը: ՀՆԱ – ի տարբերությունների աճը մեկ տոկոսով բերում է հեռավորության աճի 11,784 միավորով, հեռավորությունը սովետական երկրներից 20,239 է, հարևաններից 2,602: ընդ որում գործակիցներից 2-ը վիճակագրորեն նշանակալի չեն: Ակնհայտ է, որ Վրաստանի ինստիտուցիոնալ զարգացումը խիստ տարբերվում է մյուս, ինչպես նախկին խորհրդային, այնպես էլ ԵԱՏՄ և զարգացած երկրներից, ինչը պայմանավորված է երկրում իրականացվող արմատական բարեփոխումներով: Այսինքն ավանդական գործոնները բացատրում են Վրաստանի ինստիտուցիոնալ հեռավորության վարիացիայի միայն 52 տոկոսը, մնացած մասը բացատրվում է չդիտարկվող գործոններով: ԵԱՏՄ և հարևան երկրներից հեռավորությունը ավելի մեծ է, քան կանխատեսվել է:




**Գծապատկեր 56: Վրաստանի ինստիտուցիոնալ հեռավորությունը մյուս երկրներից**

Այժմ կդիտարկենք ՌԴ ինստիտուցիոնալ հեռավորությունը մյուս երկրներից:

Վարկած	Երկիր	R <sup>2</sup>	t-stat	prob
--------	-------	----------------	--------	------

GDP	Ռուսաստան	0.139	Dist_from_RF=18.652+12.215*d_gdp	3.435	0,001
				2.675	0,011
MEMBER		0.628	Dist_from_RF=26.575+12.601*d_gdp-29.474*post	7.097	0.000
				4.195	0.000
				-7.037	0.000
GEO		0.677	Dist_from_RF=22.345+16.222*d_gdp-39.633*post+16.760*geo	5.791	0.000
				5.175	0.000
				-7.120	0.000
				2.555	0.015
MEMBER		0.728	Dist_from_RF=23.058+15.751*d_gdp-20.739*post+9.985*geo-20.368*eatm	6.492	0.000
				5.464	0.000
				-2.419	0.021
				1.535	0.134
				-2.744	0.010
MEMBER		0.718	Dist_from_RF=25.367+13.805*d_gdp-11.547*post-24.692*eatm	7.735	.000
				5.232	.000
				-1.846	0.073
				-3.528	0.001
MEMBER		0.699	Dist_from_RF=23.798+14.266*d_gdp-35.187*eatm	7.274	.000
				5.258	.000
				-8.346	0.000


ՌԴ համար գնահատվել են մի շարք հավասարումներ, սակայն կրնտրենք վերջինը, ելնելով դիտարկումների թվի սահմանափակությունից և հավասարման որակից: Այսպես, ՌԴ ինստիտուցիոնալ հեռավորությունը բնութագրող ամենաազդեցիկ գործոնը ԵԱՏՄ անդամակցությունն է, որի հեռավորությունը անդամ երկրներից կրճատվում է 35,187 միավորով, իսկ ՌԴ ինստիտուցիոնալ հեռավորության վարիացիայի 69.9 տոկոսը բացատրվում է ՀՆԱ – ի տարբերություններով և ԵԱՏՄ անդամ լինելով:



**Գծապատկեր 57: Ռ-Դ ինստիտուցիոնալ հեռավորությունը մյուս երկրներից**

Ադրբեջանի ինստիտուցիոնալ միջավայրը առավել վատն է, քան օբյեկտիվ գործոնները թույլ են տալիս: Այս դեպքում սահմանակից երկրներից հեռավորության գործակիցը դրական նշանով է, ինչը նշանակում է սահմանակից երկրների դեպքում հեռավորությունը աճում է միջինը 12 միավորով: Բացարձակ մեծությամբ ամենաազդեցիկ գործոնը տնտեսական զարգացման մակարդակն է, այնուհետև հետխորհրդային երկիր հանդիսանալը:


Վարկած	Երկիր	R <sup>2</sup>		t-stat	prob
GDP	Ադրբեջան	0.700	Dist_from_AZ=2.085+20.299*d_gdp	0.583 9.470	0.563 0,000
MEMBER		0.746	Dist_from_AZ=11.755+16.058*d_gdp-12.279*post	2.449 6.428 -2.768	0.019 0.000 0.009
GEO MEMBER		0.764	Dist_from_AZ=9.2+17.501*d_gdp- 15.14*post+12.190*geo	1.916 5.685 -3.355 1.962	0.064 0.000 0.002 0.058



**Գծապատկեր 58: Ադրբեջանի ինստիտուցիոնալ հեռավորությունը մյուս երկրներից**

Տաջիկստանի դեպքում ամենաազդեցիկ գործոնը տնտեսական զարգացվածության մակարդակն է: Այնուհետև նշանակալի դեր են խաղում հետխորհրդային երկիր հանդիսանալը և ԵԱՏՄ կազմի երկիր հանդիսանալը: Աշխարհագրական գործոնի դերը վիճակագրորեն նշանակալի չէ:

Վարկած	Երկիր	$R^2$		t-stat	prob
GDP	Տաջիկստան	0.816	$\text{Dist\_from\_TJ} = -5.098 + 16.737 * d\_gdp$	-1.306 13.03	0.200 0,000
MEMBER		0.813	$\text{Dist\_from\_TJ} = -1.599 + 15.804 * d\_gdp - 3.041 * \text{post}$	-0.234 8.003 -0.626	0.816 0.000 0.535
GEO MEMBER		0.835	$\text{Dist\_from\_TJ} = 0.083 + 15.425 * d\_gdp - 10.053 * \text{eatm} + 11.635 * \text{geo}$	0.013 8.224 -2.102 1.569	0.989 0.000 0.043 0.126
GEO MEMBER		0.829	$\text{Dist\_from\_TJ} = 3.686 + 14.310 * d\_gdp - 9.326 * \text{eatm}$	0.622 8.082 -1.921	0.538 0.000 0.063




**Գծապատկեր 59: Տաջիկստանի ինստիտուցիոնալ հեռավորությունը մյուս երկրներից**

Ամփոփելով ընտրված երկրների ինստիտուցիոնալ հեռավորությունների գնահատման արդյունքները, պարզ է դառնում առաջադրված վարկածների հավաստիությունը: Ինչպես նաև կարող ենք տեսնել, որ ընդհանուր հաշվով ՀՀ – ի փաստացի ինստիտուցիոնալ միջավայրը առավել լավն է այս պահին՝ 2016 թվականի տվյալներով, քան օբյեկտիվ գործոնները թույլ են տալիս, որ լինի: Ըստ ներկայումս առկա տնտեսական, քաղաքական, պատմական իրավիճակի ՀՀ –ն պետք է առավել հեռու լիներ զարգացած, ՏՀԶԿ և ԵՄ անդամ երկրներից, ավելի մոտ լիներ ՌԴ, Ադրբեջան, Տաջիկստանին, բայց պատկերը հակառակն է:

Երկիր ...	Նորվեգիա	Էստոնիա	Վրաստան	ՌԴ	Ադրբեջան	Տաջիկստան
Ազդեցիկ գործոնը ըստ ռեգրեսիայի	ՀՆԱ	ՏՀԶԿ	ՆԽՍՅՄ	ԵԱՏՄ	ՀՆԱ	ՀՆԱ
ՀՆԱ->հարևան->տնտեսական ինտեգրում	X	V	V	V	X	X
ՀՀ-ն ավելի ,քան պետք է լիներ	մոտ է	մոտ է	հեռու է	հեռու է	հեռու է	հեռու է

### 3.2.2 Ձգողականության մոդելի ընդլայնումը տարածաժամանակային տվյալների մոդելավորման համար

Կառուցել ենք իՒ ինդեքս 2002-2016 թվականների համար՝ հաշվի առնելով ներկառուցվող ցուցանիշների հասանելիությունը: 2002-2016 թվականներին ինդեքսի վարիացիայի գծապատկերը արտացոլում է ինստիտուցիոնալ միջավայրի կայունությունը ժամանակի ընթացքում: Միայն Վրաստանի ինստիտուցիոնալ միջավայրն է էական տարբերություն գրանցել վերջին 14 տարիների ընթացքում:



**Գծապատկեր 60: Ինստիտուցիոնալ միջավայրի ինդեքսի վարիացիան 2002-2016թթ**

Այս հատվածում ընդլայնել և գնահատել ենք գրավիտացիոն մոդելը 2002-2016 թվականների համար 39 երկրների ինստիտուցիոնալ հեռավորության ցուցանիշներով: Գնահատվել է Pool ռեգրեսիա ՓՔԵ -ով , այդ թվում ժամանակային կեղծ փոփոխականներով: Կատարված գնահատումներից կներկայացնենք ամենամեծ թվով բացատրող փոփոխականներ պարունակող և վիճակագրորեն նշանակալի գործակիցներով մոդելները: Այս հատվածում ներառվել են նաև արտաքին առևտրաշրջանառությունը բնութագրող փոփոխականները, ինչպես նաև trade փոփոխականը, որը ընդունում է 1 արժեք,



Եթե երկիրը հանդիսանում է ՀՀ հիմնական առևտրային գործընկեր տվյալ թվականին և 0 հակառակ դեպքում:

### POOL ռեգրեսիայի արդյունքները

Փոփոխական	Գործակից (b)	t- վիճականի	Հավանականություն	Դեպ. գործակից
C	-3.989767	-3.351837	0.0009	0.806
LNGDP	14.26969	36.87404	0.0000	0.804
POST	5.864887	5.874079	0.0000	
EATM	-6.503664	-6.108720	0.0000	
OPENNES	0.029132	3.952492	0.0001	
RAWEX	0.101027	4.597618	0.0000	
TRADE	-2.472655	-3.155435	0.0017	

Փոփոխական	Գործակից (b)	t- վիճականի	Հավանականություն	Դեպ. գործակից
C	-4.422515	-3.317977	0.0010	0.806
LNGDP	14.40227	33.61795	0.0000	0.803
POST	5.661402	5.455325	0.0000	
EATM	-6.125688	-5.162480	0.0000	
OPENNES	0.029940	4.014564	0.0001	
RAWEX	0.104631	4.641708	0.0000	
TRADE	-2.672540	-3.214879	0.0014	
GEO	0.908791	0.722684	0.4702	

Փոփոխական	Գործակից (b)	t- վիճականի	Հավանականություն	Դեպ. գործակից
C	-5.914426	-4.112247	0.0000	0.824
LNGDP	15.22516	38.67059	0.0000	0.818
EATM	-6.107749	-5.901516	0.0000	
POST	6.803103	7.013387	0.0000	
OPENNES	0.024630	3.476440	0.0005	
TRADE	-3.022770	-3.998465	0.0001	
D3	-2.498909	-1.747730	0.0811	
D4	-1.811071	-1.266084	0.2060	
D5	1.121296	0.781591	0.4348	
D6	2.114545	1.465519	0.1433	
D7	4.615941	3.176371	0.0016	
D8	6.519021	4.458376	0.0000	
D9	3.940426	2.722314	0.0067	
D10	5.435883	3.741599	0.0002	
D11	4.550984	3.128382	0.0018	
D12	4.473163	3.065137	0.0023	
D13	4.011133	2.750681	0.0061	
D14	4.263481	2.923384	0.0036	
D15	4.816179	3.296130	0.0010	

D16	5.667499	3.872014	0.0001	


Գնահատման արդյունքները արտացոլում են առաջադրված վարկածների ճշմարտացիությունը: Մասնավորապես

- ✓ ՀՀ և մնացած երկրների միջև ինստիտուցիոնալ հեռավորությունը պայմանավորված է տնտեսական զարգացման մակարդակով: ԱՀՊ մեկ շնչի հաշվով ՀՆԱ – ի հարաբերության աճը 1 տոկոսով բերում է ինստիտուցիոնալ միջավայրի միջև տարբերությունների աճի միջինը 14 միավորով,
- ✓ Աշխարհագրական գործոնը, որը մեր մոդելում բնութագրվում է երկրների հետ ընդհանուր սահմանի առկայությամբ թեև բացասական նշան է ընդունում, ինչը համապատասխանում է այն փաստին, որ հարևան երկրներում ինստիտուցիոնալ միջավայրները նման են, վիճակագրորեն նշանակալի չէ,
- ✓ Երկրների անցած պատմական ուղին իր ազդեցությունն է թողնում ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման վրա, սակայն ներկա պահին առկա տնտեսական միությունների անդամակից լինելը առավել ազդեցիկ գործոն է հանդիսանում ինստիտուցիոնալ միջավայրի նմանությունների տեսանկյունից: Մասնավորապես, հետխորհրդային կեղծ փոփոխականը դրական նշանով է հանդես գալիս, ԵԱՏՄ կազմի մեջ մտնող երկրներն արտահայտող փոփոխականը՝ բացասական, ինչը նշանակում է ԱՀՊ ՀՀ ինստիտուցիոնալ հեռավորությունը մեծանում է ԽՍՀՄ երկրներից միջինը 6 միավորով, իսկ ԵԱՏՄ անդամ երկրներին մոտ է միջինը 6 միավորով:
- ✓ Արտաքին առևտրաշրջանառության ինտենսիվության տարբերությունը նույնպես նպաստում է ինստիտուցիոնալ հեռավորության փոփոխություններին: Մասնավորապես, ԱՀՊ արտաքին առևտրաշրջանառության տարբերության աճը 1 միավորով նպաստում է ինստիտուցիոնալ հեռավորության աճի միջինը 0,02 միավորով: Արտահանման կազմում հումքային ապրանքների տեսակարար կշռի

տարբերության աճը 1 միավորով ԱՀՊ հանգեցնում է ինստիտուցիոնալ հեռավորության աճի 0,1 միավորով:

- ✓ Վերջին 14 տարիների ընթացքում հիմնական առևտրային գործընկեր հանդիսացած երկրներից ԱՀՊ ինստիտուցիոնալ հեռավորությունը կրճատվում է միջինը 3 միավորով:

Դիտարկել ենք ժամանակի մեջ ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրի և տնտեսական աճի դինամիկան, ուղիղ գծային կապի առկայություն չկա տնտեսական աճ և ինստիտուցիոնալ միջավայրի ցուցանիշների միջև և պատահական չէ, քանի որ ինստիտուցիոնալ միջավայրի որակի ազդեցությունը դրսևորվում է երկարաժամկետ հատվածում և առավել մեծ ազդեցություն ունի երկարաժամկետում հատվածում ձևավորվող տնտեսական ցուցանիշների վրա:



**Գծապատկեր 61: Ինստիտուցիոնալ միջավայրի ինդեքսի և տնտեսական աճի դինամիկան, 2002-2016թթ**

Ինստիտուցիոնալ միջավայրի որակի կախվածությունը տնտեսական աճից բնութագրող լավագույն հավասարումը հետևյալն է.

$$d(inst) = -0.031 - 0.09d(growth) + 0.03d(growth(-1))$$

## **Եզրակացություն**

Ինստիտուցիոնալ միջավայրը երկրների տնտեսական զարգացվածության մակարդակը որոշող ամենաազդեցիկ ֆունդամենտալ գործոնն է: Ինստիտուցիոնալ միջավայրում դրսևորվող խնդիրները (տրանսակցիոն ծախսեր, սեփականության իրավունքներ, պայմանագրային հարաբերությունների հետ կապված) ուղղակիորեն ազդում են երկրի տնտեսական ակտիվության, գործարարության, նորարարության և այլ կարևորագույն ցուցանիշների վրա, որոնցով պայմանավորված է երկրի տնտեսության երկարաժամկետ զարգացումը և բարեկեցության աճը: Ինչպես ցույց է տալիս մի շարք երկրների փորձը, ինստիտուցիոնալ միջավայրի որակը քարացած չէ և ենթակա է փոփոխության և բարելավումների: Այն անկախ է երկրի աշխարհագրական դիրքից, անցած պատմական ուղուց, երկրի մշակութային, կրոնական գործոններից: Ինստիտուցիոնալ միջավայրի ընթացիկ վիճակի վրա առավել մեծ ազդեցություն են թողնում տարբեր տնտեսական միություններին անդամակցությունը, առևտրային հարաբերությունները: Միմյանց հետ առավել ինտենսիվ առևտրային և այլ փոխանակային գործընթացներում ներգրավված երկրները հարմարեցնում են իրենց ինստիտուցիոնալ միջավայրները և ժամանակի ընթացքում սկսում նմանվել միմյանց: Ընդ որում, առավել թույլ զարգացած ինստիտուցիոնալ միջավայրով երկրները փոխառում են առավել զարգացած միջավայրով գործընկերոջ ինստիտուցիոնալ պայմանները:

Ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող դիտարկված տվյալները ցույց են տալիս, որ << ինստիտուցիոնալ միջավայրը ունի բարելավման մեծ

հնարավորություններ: Ինստիտուցիոնալ միջավայրի որակով ՀՀ - ն առաջ է նախկին խորհրդային ճամբարի երկրների մեծ մասից, հարևան երկրներից: Անցումային տնտեսությունների կազմում առաջատար երկիրը Էստոնիան է, որին հաջորդում են Լիտվան , Լատվիան և Վրաստանը: ՀՀ -ն հետ է մնում այս երկրներից, սակայն մնացած երկրների մեջ, որոնք հանդիսանում են ներկայիս ԵԱՏՄ անդամ, առաջատարն է գրեթե բոլոր ցուցանիշներով: ՀՀ - ն գերազանցում է նաև Թուրքիային, որը հանդիսանում է ՏՀԶԿ անդամ երկիր: Համաշխարհային բանկի պետական կառավարման ցուցանիշներով, որոնք են՝ քաղաքացիների իրավունքներ և պետական մարմինների հաշվետվողականություն, պետական կառավարման մարմինների արդյունավետություն, կարգավորող ինստիտուտների որակ, իրավական ինստիտուտների որակ, հակակոռուպցիոն վերահսկողություն, քաղաքական համակարգի կայունություն և բռնության բացակայություն, իրականացված կլաստերային վերլուծության արդյունքում ՀՀ -ն ընկնում է ԵԱՏՄ կազմում մնացած անցումային տնտեսությունների խմբի մեջ, ինչը արտացոլում է հետագա զարգացման անհրաժեշտությունը՝ Վրաստանին և Մերձբալթյան երկրներին հասնելու տեսանկյունից: Մյուս կողմից, ակնհայտ է ՀՀ ինստիտուցիոնալ ցուցանիշների էական գերազանցումը իր կլաստերի ցուցաբերած միջին արդյունքներից, ինչն էլ կարող է խոսել հետագա զարգացման մեծ ներուժի մասին:

Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից կազմվող ցուցանիշներով ՀՀ դիրքերը առավել զիջող են մրցունակությամբ: Ինստիտուցիոնալ հենասյունը 2006 թվականից հետո դրսևորել է ՀՀ դիրքի կայուն բարելավում: 2018 թվականի տվյալներով ինստիտուտների տեսանկյունից համեմատաբար զիջող ցուցանիշներ են գրանցվել դատական համակարգի անկախությամբ: Կոռուպցիա, պետական սեկտորի գործունեություն, սեփականության իրավունքներ հողվածներով առաջատար ցուցանիշներ ենք գրանցել՝ գերազանցելով անգամ Լատվիային և Լիտվային:

ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրի ամենացածր արդյունքը վերջին 2 տարիներին գրանցվել է ներառական զարգացման ցուցանիշում, որով զիջում է Ադրբեջանին, Ղազախստանին, Ռուսաստանին, Թուրքիային, Վրաստանին:

Աշխատանքում կառուցված համալիր ինդեքսով, որը ներառում է նաև տնտեսական ազատականությունը, դեմոկրատիան, մարդկային կապիտալը, ֆինանսական համակարգը բնութագրող ցուցանիշներ, ՀՀ – ն կրկին պահպանում է վերոնշյալ դիրքերը: Այս ինդեքսի կիրառությամբ կառուցված գրավիտացիոն մոդելը ցույց է տալիս առևտրային հարաբերությունների, առևտրի կառուցվածքի և տնտեսական միությունների անդամակցության դերը ինստիտուցիոնալ միջավայրի նմանությունների տեսանկյունից՝ ինչպես ներկա պահին, այնպես էլ ժամանակի ընթացքում:

Ամփոփելով ընտրված երկրների ինստիտուցիոնալ հեռավորությունների 2016 թվականի համար գնահատման արդյունքները, պարզ է դառնում որ ընդհանուր հաշվով ՀՀ – ի փաստացի ինստիտուցիոնալ միջավայրը առավել լավն է այս պահին, քան օբյեկտիվ գործոնները թույլ են տալիս, որ լինի: Ըստ ներկայումս առկա տնտեսական, քաղաքական, պատմական իրավիճակի ՀՀ –ն պետք է առավել հեռու լիներ զարգացած, ՏՀԶԿ և ԵՄ անդամ երկրներից, ավելի մոտ լիներ ՌԴ, Ադրբեջան, Տաջիկստանին, բայց պատկերը հակառակն է:

Ձգողականության մոդելի արդյունքները 2002 – 2016 թվականների համար ցույց են տալիս, որ.

- ✓ ՀՀ և մնացած երկրների միջև ինստիտուցիոնալ հեռավորությունը պայմանավորված է տնտեսական զարգացման մակարդակով: ԱՀՊ մեկ շնչի հաշվով ՀՆԱ – ի հարաբերության աճը 1 տոկոսով բերում է ինստիտուցիոնալ միջավայրի միջև տարբերությունների աճի միջինը 14 միավորով,
- ✓ Աշխարհագրական գործոնը, որը մեր մոդելում բնութագրվում է երկրների հետ ընդհանուր սահմանի առկայությամբ թեև բացասական նշան է ընդունում, ինչը համապատասխանում է այն փաստին, որ հարևան

երկրներում ինստիտուցիոնալ միջավայրները նման են, վիճակագրորեն նշանակալի չէ,

- ✓ Երկրների անցած պատմական ուղին իր ազդեցությունն է թողնում ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման վրա, սակայն ներկա պահին առկա տնտեսական միությունների անդամակից լինելը առավել ազդեցիկ գործոն է հանդիսանում ինստիտուցիոնալ միջավայրի նմանությունների տեսանկյունից: Մասնավորապես, հետխորհրդային կեղծ փոփոխականը դրական նշանով է հանդես գալիս, ԵԱՏՄ կազմի մեջ մտնող երկրներն արտահայտող փոփոխականը՝ բացասական, ինչը նշանակում է ԱՀՊ ՀՀ ինստիտուցիոնալ հեռավորությունը մեծանում է ԽՍՀՄ երկրներից միջինը 6 միավորով, իսկ ԵԱՏՄ անդամ երկրներին մոտ է միջինը 6 միավորով:
- ✓ Արտաքին առևտրաշրջանառության ինտենսիվության տարբերությունը նույնպես նպաստում է ինստիտուցիոնալ հեռավորության փոփոխություններին: Մասնավորապես, ԱՀՊ արտաքին առևտրաշրջանառության տարբերության աճը 1 միավորով նպաստում է ինստիտուցիոնալ հեռավորության աճի միջինը 0,02 միավորով: Արտահանման կազմում հումքային ապրանքների տեսակարար կշռի տարբերության աճը 1 միավորով ԱՀՊ հանգեցնում է ինստիտուցիոնալ հեռավորության աճի 0,1 միավորով:
- ✓ Վերջին 14 տարիների ընթացքում հիմնական առևտրային գործընկեր հանդիսացած երկրներից ԱՀՊ ինստիտուցիոնալ հեռավորությունը կրճատվում է միջինը 3 միավորով:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ չկա ինստիտուցիոնալ միջավայրի բարելավման ունիվերսալ ճանապարհ: Չնայած ինստիտուցիոնալ միջավայրի փոփոխման հնարավորություններին, այն մեծապես կախված է երկրի քաղաքական, ոչ ֆորմալ հարաբերություններից, որոնք չափազանց դժվար կառավարելի փոփոխականներ են: Ինստիտուցիոնալ միջավայրի փոփոխությունները ուղղակիորեն ազդում են տնտեսությունում եկամուտների, ուժերի և շահերի վերաբաշխման վրա, ինչն էլ հանդիսանում է այս

ցուցանիշների բարելավման մեծ խոչընդոտ: Սակայն միջազգային պրակտիկայում առկա է հսկայաձավալ փորձը, ինչպես զարգացած, այպես էլ անցումային և զարգացող տնտեսությունների վերաբերյալ, որոնք կարելի է տեղայնացնել: Վերջինիս իրականացումը կախված է տնտեսության երկարաժամկետ նպատակներից, հեռանկարային զարգացման մասին պատկերացումներից:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Ազգային մրցունակության զեկույց, «Տնտեսություն և արժեքներ հեղափոխական կենտրոն», «Ի – Վի քոնսալթինգ» ՓԲԸ, 2017թ.
2. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, ՀՀ 2014-2025 թթ.
3. Агапова И.И. Институциональная экономика: учеб. пособие. М.: Экономистъ, 2006. - 254 стр.
4. Аузан А. А., Институциональная экономика , «Инфра-М» , 2005, 415 стр.
5. Елисеева И. И. , С. В. Курышева, Т. В. Костеева и др.; под ред. И. И. Елисеевой. - 2-е изд., перераб. и доп. - М.: Финансы и статистика, 2007. - 576с.
6. Полтерович Виктор, Владимир Попов, Дискуссии о размерах госрасходов в переходный период
7. Радыгин А.Д., Энтов Р.М. В поисках институциональных характеристик экономического роста (новые подходы на рубеже XX—XXI вв.) // Вопросы экономики. 2008. № 8. С. 4—27.
8. Рябов И. В., Смирнова О. О., Агапова Е.В., Влияние институциональных факторов на экономический рост, Publishing House "ANALITIKA RODIS", 2013
9. Саргсян Г. Л., Р. А. Геворгян, Н. С. Кочинян-Конституционная диагностика на основе сравнительного анализа характеристик демократического развития стран с переходной экономикой, Краснодар. АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ЭКОНОМИЧЕСКОЙ ТЕОРИИ И ПРАКТИКИ. Сборник научных трудов Выпуск 20. с 35-49. Статья, 2016
10. Троекурова И. С., К. А. Пелевина. Гравитационные модели внешней торговли стран БРИКС, Изв. Саратов. ун-та. Нов. сер. Сер. Экономика. Управление. Право. 2014.
11. Фрейнкман Л. М., В. В. Дашкеев, М. Р. Муфтяхетдинова, Анализ институциональной динамики в странах с переходной экономикой – М.: ИЭПП, 2009. – 252 с.



12. Acemoglu, Daron, and James A Robinson. 2012. *Why Nations Fail: The Origins of Power, Prosperity and Poverty*. 1st ed. New York: Crown, 529
13. Acemoglu, Astra Zeneca and, Stora Enso, *Human Capital and the Nature of Technological Progress*, Stockholm, December 11, 2003
14. Acemoglu, *Political Economy of Growth: Modeling Barriers to Economic Growth*, Massachusetts Institute of Technology, February 2007
15. Acemoglu, Simon Johnson, James Robinson, *Law, Politics and the Wealth of Nations: Lessons From History*, Boston Club Meeting,
16. Acemoglu, *Risk and Regulation: Lessons From the Crisis of 2008*, MIT, 2012
17. Acemoglu, James Robinson, *The Role of Institutions in Growth and Development*, Fall 2010 – Article 1
18. Akerlof, G. A. 1970. "The Market for 'Lemons ': Quality Uncertainty and the Market Mechanism." *Quarterly Journal of Economics* 84:488-500.
19. Alchian, A. A. 1977a. *Economic Forces at Work*. Indianapolis: Liberty Press.
20. Andrei Shumilov, *Estimating Gravity Models of International Trade: A Survey*, Munich Personal RePEc Archive, MPRA Paper No. 75371, 1 December 2016
21. Arrow, K. 1. 1970. *Essays in the Theory of Risk-Bearing*. Amsterdam: North-Holland.
22. Brinton, M. C., and V. Nee, eds . 1998. *The New Institutionalism in Sociology*. New York: Russell Sage Foundation.
23. Commons, J. R. 1934. *Institutional Economics*. Madison: University of Wisconsin Press.
24. Daniel Kaufmann, Aart Kraay, Massimo Mastruzzi, *Governance Matters VIII Aggregate and Individual Governance Indicators, 1996–2008*, Policy Research Working Paper 4978, The World Bank, Development Research Group Macroeconomics and Growth Team, June 2009
25. Dani Rodrik, *Where Did All The Growth Go? External Shocks, Social Conflict, And Growth Collapses*, Harvard University, August 1998
26. Eggertsson, T. 1990. *Economic Behavior and Institutions*. Cambridge: Cambridge University Press.
